

23330

894.3
C-16

430

ՀԵՅԱԼԵՐԻ
ԱԾԽԱՐՀ

ԾԱՀ
ԲՈՄԱՅԻՆ

2



894.3
C - 16

Հ | Apr.
3-11262

3-11262 ԱՆ-1096
Ա.Բ.

ԵԱՀ-ԻՍՄԱՅԻԼ և ԳԻՒԼԻԶԱՐ

943
C-16

Հ Ե Ք Ե Ա Թ

Հ
առ մե կրծութանց հորութանց պատճեն պահպան
առ մաս մաս աճացաւ առ մաս պատճեն պատճեն
ՊԱՐՍԿԵՐԵՆԻ ՀԱՄԵՄԸՑՈՒԹԵԱՄԻ ԹՈՒՐՔԵՐԵՆԻՑ ՓՈԽԵԴՐԵՑ
և իր լայնություն և Ս-Մ. Ա. ամենաշատ մայակամաս
պահպանելու մասունք պահպան խողով գումար որ
ուժ աշխատ ունի Հայ Խաչը այս բարեկի մասից
բայց պահպանության պահ պահպան պահպան այս խոհ
թուրքերէն երգերի ԲՆԱԳՐՈՎ
թուրքերէն պահպան պահպան պահպան պահպան պահպան
պահպան պահպան պահպան պահպան պահպան պահպան

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԻՆՎ. № 22530

2004

ԹԻՖԼԻՍ

Տպարան «Կուլտուրա» ընկ. Բարօնակ. № 14.
Աջման.

100

անունը չը գիտէին, սկսեցին վազել ու կանչել—անանուն՝
անանուն:

Մանուկ-թագաւորը իսկոյն վազեց մօր մօտ և սըրտ-
նեղած հարցը եց.

— Միթէ ես անուն չունեմ, որ ինձ «անանուն» են
կանչում փողոցի երեխաները:

— Անունդ Գահժառանգ իշխան է, ասաց մայրը ծի-
ծաղելով, քեզ ով ասաց, թէ դու «անանուն» են:

— Յայնի բան է, ես երկրի Գահժառանգն եմ,
բայց անունս, անունս ի՞նչ է:

— Այդ ես էլ չը գիտեմ, զաւակս, այդ թագաւոր
հայրդ գիտէ, նրանից հարցը ու:

Երբ վազէվազ իշխանը գնաց հօր մօտ և հարցը եց
միւնոյն բանը, ծերունի թագաւորը մեղմութեամբ պա-
տասխանեց.

— Զաւակս, քեզ ինձ ջնորհեց Տիւրի մողը, որը խոս-
տացաւ վերադառնալ և ապա անունդ որոշել: Մինչեւ մո-
դը չը վերադառնայ, ոչ ոք չի կարող քեզ անուն դնել:

— Արեափայլ, ասացին մերձաւոր պալատականները,
քո մոդ անւանածդ այսօր այստեղ է, վազը չնդկաստան,
ով գիտէ, թէ երբ կը վերադառնայ:

Այդ ասելով պալատականները ուզեցան Գահժառան-
գին մի յարմար անուն տալ, բայց թագաւորը կտրուկ
կերպով պատասխանեց.

— Զաւակիս անունը պէտք է մողը որոշէ, երբ վե-
րադառնայ: Իսկ դուք փոխանակ անւան մասին մտածե-
լու, գնացէք մի իմաստուն բերէք, որ որդուս հետ պա-
րապի և նրան հոգւով, մտքով կըթէ:

Պալատականները գնացին, հարց ու փորձ արին,
քննեցին և իմաստուն Դանէլին բերին ներկայացրին թա-
գաւորին: Թագաւորը քիչ զննեց իմաստունի դէմքը,
շարժւածքը, խորհեց ու ասաց.

— Վարժապետ, Գահժառանգիս գրել-կարդալ պիտի
սորվեցնես և միտքը պիտի սրես, որ նա լաւ ճանաչի
աշխարհը:

— Երկրի հրամանակալը թէն դուք էք, արեափայլ
ինչ-որ ձեր շրջունքները պատգամ տան, պիտի կատար-
ւին, ասաց Դանէլը, բայց Գահժառանգը աշխարհիս ե-
րեսին գրել-կարդալ չի կարող սովորել:

Թագաւորը խիստ զարմացաւ և թէ զայրացաւ ի-
մաստունի պատասխանի վրայ և ասաց.

— Վարժապետ, աշխարհի երեսին մի զաւակ ունեմ,
ի՞նչի չի կարող գրել-կարդալ սովորել այս աշխարհում:
Ի՞նչ է, դու կարծում ես, Սպանդարապետի սահմանում
պիտի սովորի:

— Ո՛չ, արեափայլ տէր, ասաց վարժապետը, ես չա-
սացի, թէ Սպանդարապետի սահմանում պիտի սովորի,
այլ իմ միտքս այն էր, որ ձեզ հասկացնէի, թէ ուշիմ և
հետաքրքիր մանուկը, բանի որ տեսնի արևի ծագումը և
մայր մանելը, լուսնի ծնունդն ու լրումը, միշտ աչքի ա-
ռաջ ունենայ շրջապատի այգեստանն ու բօստանը, կեն-
դանական աշխարհն ու բուսականութիւնը, նա դրանց
հետ գւարձանալով պիտի անցկացնէ իր օրերը և հաւաս
չը պիտի ունենայ գրի ու թւանշանի, նկարի ու խորհր-
դանշի հետ, այս պատճառով անհրաժեշտ է մի այնպիսի
բնակարան յատկացնել Դահժառանգին, ուր արևի լոյսը
բացարձակ ներս չը թափանցէ, այլ անզգալաքար ներ-
գործէ, այնպէս որ մասուկը չը տեսնի աշխարհի զւար-
ձութիւնը և իր միջիթարութիւնը ընթերցանութեան մէջ
որոնէ:

Այս որ լսեց թագաւորը, հրամայեց մի այդպիսի
դպրոց շինել ու յատկացնել իր զաւակին: Դանէլին էլ
պատւիրեց, որ այնտեղից երբէք դուրս չը կայ, մինչն
զաւակի չափահասութեան հասնելը:

Այնտեղ արքունի խոհանոցից ճաշ ու ընթրիք, հագուստ, կապուստ և ամեն բան մատակարարում էին աշակերտին ու վարժապետին, որը գիշեր ցերեկ տքնում էր կըթել ու վարժեցնել իր սանին: Այդտեղ եօթը տարի Դանէլլ պարապեց և իւր գիտութիւնը ամբողջապէս աւանդեց ուշիմ մանուկին:

Վարժապետը խոհարարին սկզբից պատվիրած էր, Գահաժառանգի կերակրի մէջ երբէք ոսկորի կտոր կամ մրգի կորիզ չը թողնել: Մի օր սխալմամբ իշխանի կերակրի մէջ մի ոսկորի կտոր և քաղցրաւէնու մէջ մի կորիզ էին թողնել: Գահաժառանգը ոսկորը մի քիչ կրկտնելուց յետոյ, բերանից հանեց և դէպի առիքը շպրտեց: Հակառակի նման ոսկորը դիպաւ տոտոտաղի մէջ դրւած երթի աղօտ ապակուն, կոտրեց ու դուրս գնաց: Ապակու բացւածքից իսկոյն արևի ճառագայթները ներս ցոլացան: Գահաժառանգը ճաշը թողեց. սկսեց չարչըւել, որ արևի ճառագայթները բանէ: Այս նպատակին հասնելու տեսչով աշխատելուց այնպէս էր յոդնել, քրտնել, որ արիւն-քըրտինքի մէջ տղկել էր: Հէնց այս միջոցին ներս եկաւ Դանէլ վարժապետը և աշակերտին այդ վիճակում տեսնելով անչափ վրդովլած ասաց.

—Իշխանս, այդ ի՞նչ է քո արածը, դու փորձում ես արևի ճառագայթի հետ մաքառէլ:

—Վարժապետ ջան, հոգիս սաստիկ ճնշւել է, ինձ մի անգամ դուրս տար արևը տեսնեմ:

—Շատ բարի, ասաց վարժապետը, և պալատի մեծ դուան առաջ մի թեկնաթոռ դնել տուեց, որի վրայ նրաւեցըին իշխանին, որ մտիկ անէ փողոցի անցը ու դարձը:

Երբ Գահաժառանգը չորս կողմն էր զննում, տեսաւ, որ առաջից մի կտրիճ ձիւաւը անցաւ, ձեռքին բազէ բըռնած, որի ետեւից գնում էին եօթը բարակ: Իշխանը ու-

շադրութեամբ բազէն ու բարակները զննելիս, վարժապետն ասաց.

—Իշխան, վերկացէք, ներս գնանք մեր վարժոցը:

—Գնանք, ասաց իշխանը և աւելացրեց, արքայ հօրից ինդրեցէք, որ ինձ համար էլ նժոյգ, բազէ և բարակներ ձեռք բերէ, ևս էլ որսի երթամ:

—Շատ բարի, իշխանս, ձեր ցանկութիւնը կը յայտնեմ արեափայլին, միայն թէ գուք հաճեցէք ներս գալ: Հէնց որ ներս մտան վարժոցը, իշխանի աչքովն ընկաւ ծիրանից շինած անուշը, իսկոյն վրայ ընկաւ և մի քանի գդալ կերաւ: Յանկարծ իշխանի ատամի տակ ընկաւ կորիզը:

—Այս ի՞նչ բան է, այս ի՞նչ է, հարցընեց իշխանը վարժապետից և կորիզը կոտրելով միջուկից նուշն հանեց կերաւ, ու ասաց.

—Որքան համեղ է, այս ի՞նչ բան է, ինձ բացատրէ, վարժապետ:

—Իշխանս, ասաց Դանէլը, դա ծիրանի կորիզն է, սերմն է: Դա պիտի գետին ընկնի, փտի, որպէսզի միջից նոր ծառ ծլի. մեծանայ, ծաղկի և դարձեալ ծիրան տայ:

—Ճիշտ այնպէս, ինչպէս ես էլ իմ ծնողների կորիզն ու նուշն եմ, ասաց մաախոն մանուկ իշխանը, նրանք որ փտին, ես պիտի ծաղկեմ: Հապա ես երբ պիտի միրգ տամ:

Էլ չը համբերեց Դանէլը, գնաց ներկայացաւ թագաւորին. Գահաժառանգի արկածները մէկ-մէկ պատմեց: Պէտք է գիտնալ, որ այդ միջոցին իշխանը իր տասնուշնդ տարին նոր էր լրացրել:

Թագաւորն անմիջապէս վէզիրին կանչեց, հրամայեց, որ երկրի ազնւականներին և մեծամեծներին ժողովի կանչէ: Երբ ժողովը կայացաւ, երբ թագաւորի հրաւէրի ձայնից ցնցւեց ազնւականութիւնը, թագաւորը ժողովարան մտաւ և ասաց՝

— Գահժառանգս հասունացել, որսի գնալ է ցանկանում: Քանի որ ժողոված էք, լաւ կը լինի, որ սրան մի արմար անուն էլ գնենք և ապա ճանապարհ ընկնենք:

Երբ ժողովն զբաղւած էր իշխանին յարմար անուն դնելու խնդրով, յանկարծ թագաւորը տեսաւ Տիւրի մողին իր քովը կանգնած: Երբ ամենքը ապուշկարած մտածում էին, մողն ասաց.

— Իշխանի անունը Շահ-Հասմայիլ է, իսկ նրա հետ ծնունդ առած ձիու քուռակն, որ այժմ չորս տարեկան է, տեէք իշխանին և անունը կանչեցէք «Դամէլը»: Մողը այս անունները որոշելուց յետոյ, թողեց ժողովն ու հեռացաւ:

II. Պ Ա Ծ Ա Ն Ե Ա Կ.

Թագաւորը ողորմութիւն բաժանեց, մատաղ մորթեց, մողին էլ վինտոել տւեց, որ վարձատրի, բայց նա էլ չը վերադարձաւ: Ապա հասակակից տամուհինդ-քուան իշխանագուներ եկան ծառայելու համայիլին, որոն հետ ընկերակցելով հետեւեալ առաւօտ գնացին որսի: Տասն օր որսորդները սար ու ձոր, անտառ ու քոլ ման եկան, որտացին, կերան, խմեցին: Մի առաւօտ էլ վաղ-վաղ մի աղբիւրի մօտ նստան նախաճաշի: Այս աղբիւրի զիմաց մի հակայ սար էր կանգնած: Գահժառանգը գննեց այդ լեռը, նրա ժայռերը և ապա տսաց.

— Ընկերներ, ես այս լեռան գագաթը կը բարձրանամ, դուք էլ, որ կողմը կը ցանկանաք, գնացէք, ապա ամենքս էլ գանք դարձեալ այս աղբիւրի մօտ իրար միանք:

Ի՞նչպէս ասաց, այնպէս էլ կատարեցին: Այդ գիշել

Գահժառանգը սիրոյ բաժակը «Բառասուն մանուկից» խմած լինելով. Նոգով հարբել էր, Գահժառանգը նըստաւ իր Գամէլը նժոյգը և սարի լանջով բարձրացաւ: Չորս բոլորը գննելիս, հեռուն մի գեղագարդ ամառանոց տեսաւ: Այս ծաղկալի մադաստանի միջից մի արագաւազ առու էր իջնում, որի ափին մի եղնիկ արածում էր: Իսկոյն գահաժառանգը բարակին բաց թողեց, սկսեց եղնիկին հալածել, իսկ ինքը գեռահաս պատանին էլ հետամտում էր նրան: Յանկարծ եղնիկը մտաւ մի վրան: Գահաժառանգը հասաւ, տեսաւ մի շարք բազմաթիւ վրաններ: Երբ զմայլած դնում էր սև ու սպիտակ տաղավարները, այդ միջոցին մի գեղանի օրիորդ դուրս եկաւ վրանից: Կոյսն էլ իրանց վրանի առաջ մի գեղեցիկ երիտասարդ նկատելով արձանացաւ, շւարեց ու մնաց կանգնած: Այստեղ գեռահասներն իրարմով այնպէս գրաւեցան, որ իսկոյն սիրահարւեցան: Թէկ Գահժառանգ ձիուց իջաւ, ուզեց մօտենալ ու բոնել լեռնական կոյսին, բայց բաղձանքին չըհասած գլորւեց, ընկաւ, մարեցաւ: Շատրած կոյսը իսկոյն մերձակայ վրանից մի պառաւ կանչեց, ասելով.

— Նանի, մի երիտասարդ եկաւ, մեր վրանի առաջ մարեցաւ, վայր ընկաւ: Եկ, նանի ջան, սրան ձիուն նըստեցնենք և իր տեղը վերադարձնենք: Շատրած, հողիս, քանի ծնողներս ու եղբայրներս չեն վերադարձել:

Մինչ այս խօսքերն սրտատրով ասում էր կոյսը պառաւին, քաւթառը նկատեց, որ անմեղ աղջկայ աչքերն չեն հեռանում ուշակորոյս երիտասարդից: Նա թէ ինդրում, թէ գողգում և թէ անվերջ հառաչում էր: Պառաւը նկատելով գեռահաս օրիորդի սիրատոչոր վիճակը, ասաց մտախոհ:

— Եթէ ուզում ես, որ այս ջիւանը սթափւի, խելքը գլուխը գայ, ձին նստի ու գնայ իր գործին, դրա ճարը

միայն գու կարող ես անել: Քեզնից ջոկ աշխարհում ոչ
ոք չի կարող նրան փրկել:

— Ի՞նչ անեմ, նանի ջան, ասա, նանի ջան, ես
ինչ անեմ:

— Գնա այդ ջիւանի գլուխը վերցրու, երկու թեւե-
րովդ գրկիր և նրա դէմքը քսէ մերկ կրծքիդ, նա իսկոյն
կը զարթի, կսթափի:

Իսկապէս որ լեռնական կոյար սիրահարւած էր գահ-
ժառանգի վրայ: Թէկ առաջին անգամն էր նրան տեսնում
առաջին անգամն էին նրա աչքերը իր դէմքին սկսել:
Նոյնիսկ նախնթաց գիշերը հրեշտակատիպ օրիորդը այդ
երիտասարդին էր երազում տեսել, մինչև լոյս նրա հետ
ցնորդներում անցկացրել: Է՛լ չը կարողացաւ իրան զսպել,
իսկոյն վրայ հասաւ, գրկեց, սպասանու վեհաշնորը գլուխը
սեղմեց կրծքին, մինչև սթափեցրեց թշւառին: Գահժա-
ռանգը ուղիղ ելաւ ցնորածի նման, շուրջը զննեց և երբ
բոլորովին ուշքի եկաւ, այս ինքնաբուղին քառեակը ասաց
սիրեկանին.

Փախցրի եղնիկիս, էլ որտեղ գնանք,
Յանկարծ դիմացս ելաւ արև կերպարանք,
Անգութն ինձ զլորեց ջերմ սիրոյ ծովակն,
Սրտիս խորքը վառեց մի անմար կրակ:

Կոյսը

Հազարաւոր որտորդ գալիս է այս սար,
Բազէիդ վեր վարէ, կագաւիդ առ, տար.
Ինչի՞ ես խեղղւում սիրոյ փոթորկում,
Ընկղմիր ծովակում, գրկիր սէրդ առ, տար:

Իսմայիլ

Աննման են հոգիս, ունքդ աղեղ լարած,
Սէրդ էլ ինձ խեղղում է շունչփողս կապած,

10

Փայլուն դէմքդ գլոր, արև ու լուսին,
Շողք են սփոռել բոլորս, արե ու լուսին:

Կոյսը

Բլբուլի գեղգեղին ձայնդ է խիստ նման,

Բլբուլի ողբերից վշրւեց լեռ քարն,

Քեզ համար ալ քօզս եմ պատուել, սիրեկան,

Արի, մի համբոյր առ թշնամ, սիրաս տար:

Իսմայիլ

Կեծմոած ալ թշերն հոգիս թովեցին,

Նուրբ մատ, սաղափ եղունգ սիրտ գրաւեցին,

Գոհարի պէս ցոլուն կուրծքը ինչպէս ձիւն

Փայլեցան, բուրեցին, ջղերս քաղեցին:

Կոյսը

Ես քեզ նման անմեղ ջիւանին մատաղի լուսութիւն

Երբ պատկերդ տեսայ, ես ընկայ կրակն այս թու

Թէ ուզում ես ալ վարդ, բաղպանին գնայ, և արդին

Թէ սիրով չը տայ, վեր առ, ինքդ տար:

Իսմայիլ

Պէտք է տկար հոգիս ցոյց տալ բժշկիս, ունչ առել

Հեղեղի պէս հոսած արցունք տես աչքիս, այսուհետեւ

Եթէ բախտն էլ օգնէ Շահ-Խսմայիլին,

Վերապառնայ գտնի իր Գիւլիշարին:

Կոյսը

Կտրիճ, քաջերի ես գու սպարապետ,

Քեզ զլուխ են թէքում զօրք ու զօրապետ,

Գիւլիզարը կը լնի մատաղ քու ճամբին,

Մի ընդհատել ուղիդ, արի ու գնա:

Թուրքերէն-Իսմայիլ

Ղաշրդմ ջէյրանի գիղէմ եանընա,

Նիգեահի գէօսթէրիր նուրի գիզարի,

Բէնի ղարգ էյլէդի աշդ դէրեասընա,
Դէրունիմդէ սալդի մուհարէթ նարի:

Գիլիզար

Նէչէ բին ավշիլար գեազար բու դաղի,
Շահինըմ քեաքլիդէ սալ տա, վար յիւրիւ,
Նէչին ղարգ օլուշան աշդ դէրեասընա,
Բիր գաման էնկինէ տալ, դա վար յիւրիւ:

Մանէնդըն բուլունմազ, էյ գաշը քէման,
Էօլդուրը աշգըն հէչ վէրմէդ աման,
Եանաղըն շէօհէսի մահ իլէ թէման,
Սայքի շէօհէ վէրիր շէմսի, գամէրիւ:

Սէդայի բիւլիւլէ օղաթդըմ սէսին,
Բիւլիւլ սէդա վէրիր սընար ղաֆէսի,
Եար, սէնին իչին ալդըմ բիքեար ֆէարդէսի,
Եիւլումտան բիր փուսէ ալ տա, վար, յիւրիւ:

Ալվան-ալվան օլուշ գէօրդիմ եանաղի,
Դէսթի զարնիշան, սէդէֆ տընազի,
Ալմաս, ջաւահիր գըքսիւնէօն աղի,
Աչըլըն սէյր իդէմ գիւլ մէմէլէրի:

Ջանըմ դուրբան սէնի քիրի ջիվանա,
Սէնի գէօրդիւմ, գիւշդըմ աշդը իւմմանա,
Գիւլէ գէօյնլիւն վարիսէ եալվար բազմանա,
Բազման գիւլ վէրմէզսա, չալ դա, վար, յիւրիւ:

Թաբիր գէրէք միւշըիւլ հալիմի բիլա,
Ազըթդըմ գէօդ եաշին, գէօնդիւրդըմ սէլա,
Մէվլամ իմդադ էմսին Շահ-իսմայիլա,
Գէլիր բուլարիւլամ օլ Գիւլիւզարիւ:

Իգիթ սէնսին իգիթլարըն սարդարի,
Լէրինդէն ախըթտըմ միսկի, ամբարի:

Մանա զուրբան օլուն բու Գիւլիւզարի,
Փէսմէ եօլուն բէնդէն, գեալդա, վար, յիւրիւ:

Որից յետոյ իսկոյն գահաժառանգը մատի կնիք մա-
տանին տւեց կոյսին, աղջիկն էլ իր զլիսի գոհարազարդ
սանըը տւեց երիտասարդին: Գահաժառանգը ձին նստե-
լուց յետոյ, հետևեալ սնջատման երգերն են ասում ի-
րար:

Խսմայիլ

Ոլոր-մոլոր նայող սրտիկ,
Ինչպէս գնամ, տալբեմ անջատ,
Վառւեց հոգիս, դարձայ մոխիր,
Խելքս թուաւ, դաժան անջատ.

Կոյսը

Նախօրէն քեզ չէի ծանօթ,
Գնա, կտրիճ, քոնն եմ ընդմիշտ,
Թոշնեց բաղիս տերի ու խոտ,
Գնա, կտրիճ, քոնն եմ ընդմիշտ:

Խսմայիլ

Աշխարհում եարս է աննման,
Զեմ ապրել ես առանց նրան.
Բլուլ հրաժեշտ չեմ տալ բնիդ,
Լաւ է թառեմ փշոտ թփիդ:

Կոյսը

Յանկարծ տեսայ, քո գեղ պատկեր,
Ինչիս պէտք է երկրիս կալքերն.
Միայն քու սէրն ինձ կը փրկէր,
Գնա, կտրիճ, քոնն եմ ընդմիշտ:

Խսմայիլ

Շահ-իսմային ինքն է, հաստատ,
Միրուն անունդ յայտնիր անվախ,

Սիրահարին պէտք չէ կրակ,
Դժւար է ժամն, դաժան անջատ:

Կոյս

Գիւլիզարդ բարձաւ քեզ եար,
Երազումն էր տեսել տիպարդ,
Այս խոստումիս դու հաւատա,
Գնա, կտրին, քոնն եմ ընդմիշտ:

Թուրքերէն—Խամայիլ

Մէլիլ մէլիլ բախան գիլրէր,
Դէօնէմ բիր եանա, այրըլըգ,
Եանըլը միւջիւղըմ քիւ օլու.
Օլսամ գիվանա, այրըլըգ:
Դիւլզար

Բիլմէզդիմ սէնի էզէլի,
Վար, գեալ, իզիթ, բէն սէնինըմ,
Թօքիւղի բազըն դազէլի,
Վար, գէթ, իզիթ, բէն սէնինըմ:
Մէնէնդի բուլունմազ եարըն,
Դէօնուլ չէքէր ահ ու զարըն,
Բիւլիւլըմ, թէրք էթմա եէրըն,
Ղօնամ գիւշանա, այրըլըգ:
Նագեանդեան գէօրդիմ ջէմալըն,
Նէյնէրիմ դիւնեաղա մալըն,
Ջէվալըն Դէօհարի լալըտ,
Վար, գէթ, իզիթ, բէն սէնինըմ:

Շահ-Խոմայիլ գեալդի սանա,
Գիւզալ, աղըն բիւղըր բանա,
Բէնի դոյմա եանա, եանա,
Միւզիւլ դըր բանա այրըլըգ:
Գիւլզարի դըր սէնին եարըն,

Սարիմդա գէօրդի դիվարըմ,
Վալլահի բու դըր իխրարըմ:
Վար, իգիտ, գէթ, բէն սէնինըմ:

Սիրահարներ իրար հետ երգով այգպէս զրուցատրելը,
Քաւթառ պառաւը հեռակց ամեն բան լսեց ու տեսաւ:
Երբ նկատեց, թէ սիրահարները ինչ այրած սրտով իրար
բացատրում էին զգացումները, պառաւը մօտեցաւ ու տաց:

— Այ աչքի լոյս ջահէններ, գուք ջայլամի նման ի-
րար էք անցել, շփոթւել էք, չըգիաէք, թէ ինչ անէք: Իշ-
խան, դու ինձ լսիր և իմ խորհրդով շարժւիր, չես վե-
նասւիլ: Մի քանի օր յետու Գիւլիզարի հայրը պիտի ներկա-
յանայ թագաւոր հօրդ, որպէզի արօտի խնդիրը կարգա-
ւորէ: Դուք գնացէք, ժողովին ներկայացէք և պարագա-
ները այնտեղ պարզեցէք: Թագաւոր հայրդ պաշտօնապէս
օրիորդին կուզէ քեզ համար, հայրը Գիւլիզարին քեզ կը
տայ և ամեն բան կը վերջանայ: Այժմ, զաւակս, եկ, որ-
պէս բէն Գիւլիզարի այտերից երկու համբոյր քաղիր ու
ճանապարհ ընկիր:

Գահժառանդը նորից ձիուց ցած իջաւ, գրկեց գար-
ձեաւ համբուրեց իր սիրեկանի այտերը, աչքերը, գքւեց,
ապա աշտանակեց ձին ու ճանապարհ ընկաւ: Ուղղակի
աղրիւրի կողմը գնաց, հասաւ, տեսաւ, որ ընկերները
իրենց որսերը իրար էին ցոյց տալիս, իսկոյն վրա թափ-
ւեցան Գահժառանդի ընկերակիցները և հարցւին

— Իշխան, ուր է քո որսը,

Իշխանը սրտի խորքից մի հառաչ բաց թողեց ու
տաց:

Հէյ աղաններ, դատաւրներ,
Լսէք, ինչից եմ զրկել,

Հուլալ արած պաք ստացայ, այս մ
 Մեղրաշթից անջատւեցայ: այս մ
 Ցնորքի մէջ ընկղմեցայ,
 Ապրանք առի խանութ բացի,
 Միաբս չ' թէ ուր մնացի,
 Սիրուն եարից անջատւեցայ:
 Այսօր ուրախ խիստ խնդացի,
 Եարից վլէժս էլ հանեցի,
 Գիշերս այնտեղ հիւր մնացի,
 Վարդ երեսից անջատւեցայ:
 Սարվի բօյը, անմեղ-հրեշտակ,
 Ինձ մի թողնել կարօտ, ֆալաք,
 Շահ-իսմայիլն արաւ խնդրանք,
 Դիւլիզարից անջատւեցայ:

Թուլքերէն

Հէյ աղալար, հէյ ղաղիլար,
 Գէօրիւն, նէլարդան այրըլիլմ,
 Եօփտիւմ և հէմ հալալլաշդըմ,
 Լէբի սիւրքեարդան այրըլիլմ:
 Բուր գիւն բիր խայլա տալդըմ,
 Բէնդէ բիլամ նէրդա ղալդըմ,
 Դիւքան աշդըմ, մաթահ ալդըմ,
 Բիր գիւգէլ եարդան այրըլիլմ:
 Բուր գիւն շազ օլուր գիւլարիմ,
 Եարդան ինթիզամ ալարըմ,
 Բիր գէջէ միհման ալայըմ,
 Դիւլ իւզիւ եարդան այրըլիլմ:
 Սէրվի բօյու հիւրիւ մէլէք,
 Բէնի հասրաթ դօյմա, ֆէլէք,
 Շահ-իսմայիլ իւզէր գիւլէք,
 Բէն գիւլիզարդէն այրըլիլմ:

Ազբիւրի մօտից վերադառնալով իրենց վրանները,
 սաստիկ յոգնած լինելով ընկան, քնեցան, Երբ լուսաշաւ
 ընկերներն ասացին գահժառանդին:

— Իշխան, այսօր ուր պիտի երթանք:

— Արանից յետոյ ես ուրիշ սեղ չեմ կարող զնալ:
 Այսօրւանից իմ գործերի մասին ոչ ոք տեղեկութիւն չի
 կարող ստանալ:

Գահժառանգը ընկաւ առանձնութեան մէջ. նա չէր
 երեսում գւարճութեան, խրախճանքի շրջաններում և խիստ
 մտածմունքից օրէցօր դեղում ու նիհարում էր: Այս որ
 նկատեցին ծնողները, մի բժիշկ յատկացրին իրենց միակ
 զաւակի համար, որպէզի նրան հետեւ, ցաւն իմանայ ու
 հնար գտնէ: Այս միջոցին Գահժառանգի ընկերներից մէկը
 ներկայացաւ թագաւորին և ասաց:

— Թագաւորն ապրած կենայ, Շահ-իսմայիլը բժշկի
 կարօտ չէ, նա սիրահարւած է և սէրն է նրան գժւացրել:
 Իսկոյն թագաւորը թիկնապահներին և սենեկապահն-
 ներին ուղարկեց որդու մօտ, որ իմանան թէ ում ալջ-
 կայ վրայ է սիրահարւած, որպէսզի պատգամաւոր ու-
 ղարկէ և խնդրէ այդ աղջկան ու ամուսնացնէ իր միակ
 զաւակին: Գահաժառանգը իրեն ներկայացող պատգամա-
 ւորներին ասաց, որ ինքը իրենց սահմաններում ոչոքի
 աղջկայ վրայ սիրահարւած չէ: Իսկ գեռահաս իշխանի
 ներքին վիշտը — սէրը օրէցօր նրան տանջում էր, հալ ու
 մաշ անում: Հայրը երբ նկատում էր այս բոլորը, ինքն
 իրեն մտածում էր: — Ես Խոլմանդարի թագաւորը լինեմ,
 Ծոփի ու Խոսրօէնի տէրը, ամբողջ Նայիրի և Աւրար-
 տայի նտէրը իմ քաղաքիս միջով գան ու Քաղուկայ ան-
 ցնեն, այսքան մաքս ու տուրք վճարին ինձ, ամբողջ աշ-
 խարհի զարդից ու կերպարից ինձ նէր բերեն և իմ միակ
 որդիս մի աղջկայ սիրով տանջւի, Կպատակին չը հասի
 ու ծխայ վառի: Այս տիսուր մտքերը ստիպու մէին թբշ-

ւառ հօրը և ամբողջ Խոսրոէնի և Ծոփի աշխարհի տիրոջը անվերջ լալու ու սգալու իր անել վիճակը:

Թագաւորի այս տիրուր վիճակը նկատելով Գահժառանդի ընկերներից մէկը, գաղտնաբար նրան ներկայացաւ և յայտնեց:

—Երբ մենք որսի էինք գնացել Հանձիթի Սև-լեռներում, իշխանը մեզնից բաժանեց, մենակ մտաւ երկրի խորքերը և այնտեղ հիւր մնաց երկու գիշեր հովիւների վրաների մէջ: Երբ մեզ մօտ վերադարձաւ և մենք հարցրինք, թէ. — «ո՞ր կողմը պիտի գնանք», հետեւեալ օրը. — նա պատասխանեց, թէ « ես սրանից յետոյ էլ ուրիշ տեղ գնալիք չունիմ և այսօրւանից գործերիս թող ոչ ոք չը միջամտի»:

Այս որ լսեց թագաւորը իսկոյն մի լրտես սուրհանդակ ուղարկեց Հանձիթի Սև-լեռները, որ հարց ու փորձ անէ և մի հաստատ լուր հասցնէ իրեն: Սուհանդակը գնաց հասաւ այն լեռները, որտեղ վրաններում հովիւներն էին ապրում իրենց թանձրադակ ոչխարներով: Նրանց իշխանն էր հոչակաւոր իդուն, որը ամեն տարի հարկ էր բերում Խոլմանդարի թագաւորին, որ կարողանայ աղատ արածեցնել իր հօտերը Հանձիթի լեռներում և մնացու ոչխարը անցլայնել տանել Սուրիա և Քաղղէա: Սուրհանդակը նոյնիսկ լսել էր և տեսել իշխանի այն հոչակաւոր գեղանի աղջկան Գիւլիզարին (Վարդիթերին), որի գովքը գուսանները երգում էին լեռնական աշխարհի բարձունքներում և ձորերում: Երտեսը վերադարձաւ, զեկուցեց տեսածներն և ասաց.

—Ինձ թւում է, արևափայլ, որ Գահժառանդը իդունի աղջկա՝ Գիւլիզարի վրայ է սիրահարւած:

Երբ թագաւորը մտածում էր Հանձիթի լեռների, նրանց խաշների, սև, կապոյտ ու սպիտակ վրանների, կտրիճ երիտասարդների և գեղանի կոյսերի մասին, եկան

իմաց տւին Զորիհին, թէ Սև-լեռների հովիւների ցեղապետ՝ իդունի կարապետն եկաւ, իջաւ պալատի հիւրատանը: Ուրախութեամբ լցւած թագաւորն իր մօտ կանչեց հովիւների ցեղապետի առաջնորդին, որպէս զի հարցաքննէ և տեղեկութիւններ ստանայ, թէ երբ է գալու իդուն:

—Ցեղապետ իդունը աղջիկ մէնի, հարցրեց խօսակցութեան վերջը թագաւորը կարապետից:

—Այս, արևափայլ, ասաց կարապետը, մի բարեսիրտ և գեղանի աղջիկ ունի: Շատ չանցած իդուն էլ եկաւ, հիւր իջաւ արքունիքում: բայց սովորական կարգերի համաձայն թագաւորը կարող էր նրան իր գահլիճն ընդունել գալուց միայն երեք օր յետոյ: Երբ երրորդ օրը իդուն ներկայացաւ Զարեհին յանձնելու բերած նւէրներն ու հարկերը, արտայայտելու իր երախագիտութիւնն ու հպատակութիւնը, թագաւորն ասաց.

—Իշխան, դու մի աղջիկ ունիս Գիւլիզար անունով: Տիւրիներինչումով, Աստղական պատգամով օրիորդին հարս եմ ուղում իմ որդի Շահ-Խսմայիլին, որը տեսել է աղջկանդ և սիրահարւել:

—Արքայ, մեծ ուրախութեամբ, միթէ ձեր գերունին ձեզ կը ինայեմ, ասաց իդուն կրկին ու երեքին խոնարհերով թագաւորի առաջ: Խալզը թող շնորհէ, մենք էլ շնորհաւորենք, ասաց ու կանգնեց իդուն:

Թագաւորն հրամայեց սեղան պատրաստել և ձաշինստեց խնամու հետ: Երբ սկսեցին գինու թասերը դատարկել, մաղթանքներ անել և շնորհաւորել, իսկոյն սենեկապանները լուր տարան Շահ-Խսմայիլին, աւետեցին, թէ արդէն նրա բաղձանքը կատարւած էր և հայրը՝ իդուն Գիւլիզարին տեղ էր Գահժառանդին: Այս որ լսեց սիրահար երիտասարդը անչափ ուրախացաւ, տաւիդը ձեռքն առաւ և այս երգը նւագեց.

Այսօն հոգով ինդաց, բերկրեցաւ աշխարհ,
Վէրքիս սպեղանին շաղւեց Գիւլիզարն,
Սիրածիս գովում է անկեղծ սաղ աշխարհ,
Աղեղ ունքեցն, սլաք թերթիչ գրափիչ:

Քեզանից ինչ կը պակսէր, թէ ես ցնծայի,
Մի ժամ առաջ իմ մուլազիս հասնէի,
Դեռ չը մեռած մէկ էլ դէմքդ տեսնէի,
Սիրտս սանձող կապոյտ աչեր խիստ թոփիչ:

Ունքերդ նման է լարւած աղեղին,
Գլոր տիպարդ էլ երկնի մահիկին,
Սէրդ ինձ վառեց, մրկեց առանց կրակի,
Քաղցրահայեաց վերքիս դարման սփոփիչ:

Մի քաղցրաբոյր վարդ ես, ծաղիկների խամն,
Ես խմեցի սիրով լցւած լամբար թամն,
Գուսաներն ողբան կորուստս անսպակաս.
Վշտիս դեղը, դարմանն ու մխիթարիչ:

Թուրքերէն

Հէրքէս շազ ու մէրուր օլուր գիւլտիլար,
Էօմրիւմիւն հայեաթի Գիւլիզար խանում,
Հէրքէս սէվտիգիմ խսմին վէրդիլար,
Բէնիմ քէման զաշլի Գիւլիզար խանում:

Նէ օլուր շազ օլուր բէնդէ գիւլէյդիմ,
Մուլազլմա, մագսուղըմ էրէյդիմ,
Բիր դահա էօմէմիշ եիւզիւն գէօրէյդիմ,
Բէնիմ ահու գէօզի Գիւլիզար խանում:

Ղաշարըն բէնդէթդիմ զուրուլու եայա,
Ջէմալըն բէնդէթդիմ գէօյտէքի այա,
Գէջէ, գիւնդիւզ եալվարըրըմ Մէվլայա,
Բէնիմ շիրինդգէօզիւ Գիւլիւզար խանում:

Բէնիմ սէվդիջիյիմ Գիւլիզար խասի,
Ռաքիբար չէքսընլար դայիմա եասի,
Շահ-Իսմայիլ իչդի աշբարն թասի,
Գէօյնլումըն սիւրուրու Գիւլիւզար խանում,

Ասաց ու լսեց սիրահարը և ընկղմեց հոգեկան քաղցը
ցնորքների մէջ: Թողնենք Գահժառանգին իր քաղցը
երազների մէջ, անցնենք Հանձիթի լեռները, շըր-
ջենք Գիւլիզարի շուրջը: Մինչ իդուն Խորմանդարում ար-
քունի սեղանն էր վայելում, նեկտարի նման անուշաբոյր
Մալլաթայի գինի էր խմում, դստեր ուրախութեամբն
հրձւում, իդունի դրացի քաւթառ պառաւը, որ ականա-
տես էր եղած սիրահարների առաջին համբոյրին, իսկոյն
քաղաքը թողեց, գնաց Հանձիթ, իդունի տիկնոջ աչքալոյս
տալու, Գիւլիւզարի սրտին բերկրանք պատճառելու, թէ
արգէն թագաւոր հայրը խնդրել էր, հարսնացրել Գիւլի-
զարին և ցեղապետն էլ համաձայնել, ուրախութեան թա-
պը վայելել էին:

Այս որ լսեց Գիւլիզարի մայրը—Նանա տիկինը,
բորբոքեցաւ, կրակ կտըւեց և հրամայեց ցեղի հովիւնե-
րին իսկոյն վրանները վերցնել, էշերին ու ջորիներին
բառնալ և ճանապարհ ընկնել դէպի Մուլզան ձմեռելու:

Այդ ինչ բոնութիւն է, ես ինչք պիտի պարտա-

ւորեմ իմ ազատ աղջիկս Խորդանդարի բոնաւոր թագա-

ւորին հարս տալու, որ խեղճ երեխայիս կապեն, կաշկան-

դեն պալատական կարգերով և մի օր էլ գլխին փորձանք

բերեն:

Ցեղապետ իդուն պատրաստութիւների համար թա-
գաւորից քառասուն օրւայ ժամանակ առաւ, գնաց, որ
օժիտ պատրաստէ, տարտ հարսանիքն սկսեն ու դարձաւ
դէպի ցեղի վրանները: Երբ Հանձիթ հասաւ, բարձրացաւ
Սև-Լեառն լանջերին, ապշած մնաց. ցեղը քոչել էր, գնա-

ցել, վրանների տեղը զով զեփիւնն էր սովում ու անց-
նում ամայի լեռնալանջերում: Իդուն երբ մոլորւած զըն-
նում էր շուրջը, հեռուն մի պատառուած վրան նկատեց
նրան մօտեցաւ, տեղեկութիւն ստացաւ, ինքն էլ ձիաւոր-
ներով դէպի Մուղանի ձմեռանոցներն ուղղւեց:

Գահժառանգը աներոջ ուզած քառասուն օրւայ ժամա-
նակամիջոցից սաստիկ յուզւեց, մտաւիր առանձնարանը ըլ-
նելու և պատւիրեց, որ քառասուն օր ոչ նք նրան չան-
հագստացնէ, քնից չսթափեցնէ: Թագաւորն էլ իր վէզիրնե-
րով հարսնեական պատրաստութիւնն սկսեց: Նորանոր պա-
լատներ, աւազաններ, այգեստաններ ու բաղանիսներ էին
շինում, ոսկուց, արծաթից, գոհարից զարդէր էին պատ-
րաստում, իոկ արհեստաւոլները ընտիր բէնէզներ ու քա-
թաններ էին գործում պալատի շրջապատում:

Մի երկու շաբաթից յետոյ, երբ աղջկայ կողմից
պատգամաւորներ չեկան, նւէրներ չըբերին, թագաւորը
երկու թիկնապահին, աւագ սենեկապանի հետ ուղար-
կեց հանճիթ, հարսին նւէր տանելու և լուր բերելու: Երբ
պատգամաւորները հասան Սևլեառն լանջերը, համոզւեցին,
թէ մարդ չկայ, վերադարձան Խոլմադար և ասին թա-
գաւորին.

-Արեւափայլ, հովիւների վրանների տեղը մի թիգ
խօտ է բարձրացել, բռնաւորը գունատւեց: Երբ գահժա-
ռանդն էլ այս բօթը լսեց, ոլոր մոլոր հօրը ներկայացաւ
և այս քառեակն ասաց.

Այս առաւօտ երազեցի սիրուհում,
Ուր է Վարդիթերս, չեկաւ, ուր մնաց.
Ուշքս զնաց, վայր ընկայ խելակորոյս,
Ուր է Վարդիթերս, չեկաւ, ուր մնաց:
Ինքն ազնւական քնքոյշ... ու գեղեցիկ,
Զայնը բլբուլի երգից խիստ ազդեցիկ,

Վիզը բարձր, այտ, կզակ խալով նշխած,
Ուր է Վարդիթերս չեկաւ, ուր մնաց:
Հազնւել է գոյնգոյն հանդերձ ոսկեթեր
Նրան տեսնող գովքն է կարդում ամեն տեղ,
Գրկեցի, զրոշմեցի ճտին ջերմ համբոյր,
Ուր է Վարդիթերս, չեկաւ, ուր մնաց:
Թագի միակ ժառանգս սիրով վառեցայ, արդարացայ
Եարիս խորհուրդ, խրատն խսպառ մոռացայ,
Սիրոյ լամբար թաս խմեցի, արբեցայ, արդարացայ
Ուր է Վարդիթերս, չեկաւ, ուր մնաց:
Ժուրբերէն

Սահարդան օղբաղըմ հիւրիւ զլմանա,
Հանի՞ բէնիմ Գիւլիւզարըմ զեալմաղի,
Ալդրդըմ ազլըմի օլդում դիւնա,
Հանի՞ բէնիմ Գիւլիւզարըմ զեալմաղի:
Քէնդի բիր բէյզադա, գիւզէլ դըր ալի,
Սէղայը բիւթիւլա օխշագդըմ դիլի,
Բիր մինա գեարդանլի, փիւսկիւրմէբենյլի,
Հանի՞ բէնիմ Գիւլիւզարըմ զեալմաղի:

Զէմալինէ գէյմիշ թիւրլի էլքիսա,
Օնու գեօրան մէհաղին էլէր հէր քէսա,
Քուջում գեարդանընդանալզըմ բիր փուսէ
Հանի՞ բէնիմ Գիւլիւզարըմ զեալմաղի:

Շահ-Խսմայիլ դէր բի սէվլայա եանդըմ,
Եարըն նասըհաթը ունուղուր զալդըմ,
Աշգըն տօլուսունը իչիր մէստ օղում,
Հանի՞ բէնիմ Գիւլիւզարըմ զեալմաղի:

Զարէն թագաւորը երբ լսեց որդու աղեկէզ սրտից բղխած այս երգը, ստոտիկ բորբոքւեց, հրամայեց իսկոյն վէզիրին կանչել: Երբ աւագ պաշտօնեան ներկայացաւ երկրի հրամանակալին, խստասիրու թագաւորը արկածները ս'զբից մինչև վերջը նրան նկարագրեց: Նոյնիսկ սուբհանդակի բերած վերջին լուրերի մանրամասնութիւնները պարզեց, յուսալով որ խելացի կառավառչափետը պիտի կարողանայ հնարք գտնել և ծերունի հօր միակ ժառանգին ազատել այս անակնկալ միրոյ տանջանքից: Վեզիրը քիչ խորհեց ու ասաց.

—Եթէ ինձ իրաւունք կը տաք, արեափայլ, ես իմ ծըրագիրս ձեզ կը պարզեմ և կը կարողանանք ճար անել սիրատչոր Փահժառանգին.

—Ասա համարձակ, դու գիտես, որ ես խորհուրդներդ անարգող չեմ:

—Տէր իմ, ասաց վէզիրը մինչև մէջը խոնարհելով և երկրագելով թագաւորին, հաճէցէք մի մունետիկ ուղարկել քաղաքն ու շրջակաները, իմացրէք ազգաքնակութեան թէ թագաւորը իր միակ ժառանգին պիտի ամուսնացնէ: Երկրում որքան որ գեղանի կոյսեր կան, շաբաթ օրը զուքին, զարդարւին, վարդաստանի պարտէզում հաւաքւին, որ նրանցից մէկն ու մէկն իշխանը հաւանի և կնութեան խնդրէ:

—Շատ լաւ կը լինի, ասաց թագաւորը ըմբռնելով վէզիրի հեռաւոր խորհուրդը:

Իսկոյն մունետիկներին պալատի դռանը հաւաքեցին, ուստաէէրները տիփն և ուղարկեցին, որ տարածեն թագաւորի կամքը երկրի ամեն կողմը: Թէ ինչպէս էին տքնում ծնողները զարդարել ու պճնել իրենց աղջիկներին, որ կարողանան գրաւել Գահժառանգի սիրաը և երկրի թագուհին դարձնել պէտք է մարդ տեսնէր իր աշքով: Խոլմանդարի աղջիկները իրար հետ մքենավ, իրարից

գերազանցելու տեսջով բոհնկած զուգւեցան, կոկեցան ու զարդարւած գնացին վարդաստանի պարտէզում այնպիսի տեղեր գրաւեցին, որ կարողանան աչքի ընկնել, Գահժառանգի հայեացը ձգել իրանց վրայ և նրան թովել:

Գահժառանգը այդ օրը վարդաստանի պարտէզը մտաւ, բարձրացաւ ապարանքը, զուրս եկաւ շահնիշինը, և երբ նկատեց հազարաւոր գեղանիներին, վեր առաւ տաւիղը, վառած սրտով նւազեց և այս տաղերն ասաց.

Խմբւել են այգում կոյսեր գեղեցիկ,

Ո՞չ մինը նման չէ իմ վարդիթերին,

Սիրու թովող—ձգողն է միշտ գեղեցիկ,

Ո՞չ ոք նման էլ չէ իմ վարդիթերին:

Ոմանք ալ են հագել, ոմանք էլ կարմիր,

Մին նարգիզ է քաղաքում, միւսը՝ վարդ կարմիր,

Որի հայրն է գենպիտ, որինն էլ վէզիր,

Ո՞չ ոք նման: Էլ չէ իմ վարդիթերին,

Որը կանաչ է հագել, որն էլ սպիտակ,

Որի ատամներն են մարգարիտ ճերմակ,

Որի վզին կապած յակինթի մանեակ,

Ո՞չ ոք նման էլ չէ իմ վարդիթերին:

Ոմանք զիպակ հագել, ոմանք էլ մարմաշ,

Ոմանք նուրբ բէհէզից կապել են շղարշ,

Որի մազերն է սև, որինն ոսկեթել,

Ո՞չ ոք նման էլ չէ իմ վարդիթերին:

Գահժառանգի սիրու անհուր վառեցաւ,

Կոյսերին հրաժեշտ տւեց, հեռացաւ,

Վարդաստանում շիոթութիւն բարձրացաւ,

Ո՞չ ոք նման էլ չէ իմ վարդիթերին:

ու մարդու մարդ Թուրքերէն
 զիս Բէօլիւք-Բէօլիւք օլմուշ հիւրի զզլարի,
 Հէջ բիրիսի Գիւլիզարա բէյնզամազ:
 Գէօնիւլ սէվտիյի դըր գիւզէլ զիւնեազպարանա
 Հէջ բիրիսի Գիւլիզարա բէյնզամազ:
 Քիմի ալլար գէյմիշ, քիմի զրմզի
 Քիմի ոիւլ դէօշիւրիւր, քիմի նէրզիզի,
 Քիմի շէյլըն, քիմի վէզիըն զըզի,
 Հէջ բիրիսի Գիւլիզարա բէյնզամազ:
 Քիմի ալլար գէյմիշ, քիմի թուրունչի,
 Քիմինքին աղզընզաքի դիշլարի ինչի,
 Քիմին դօյնունզա ջավահիր—ինչի,
 Հէջ բիրիսի Գիւլիզարա բէյնզամազ:
 Քիմի ալլար գէյմիշ, քիմի զարբարի,
 Քիմինին դիւնեազա եօք դըր արբարի,
 Քիմինին դօյնունզա ջավահիր զարի,
 Հէջ բիրիսի Գիւլիզարա բէյնզամազ:
 Շահ-Խսմայիլ աշգա եանդի, թուժուշդի,
 Գզլար իլէ հալալաշդի, գէօրիւշդի,
 Գիւլշան բաղչէսընզա վալվալա դիւշդի,
 Հէջ բիրիսի Գիւլիզարա բէյնզամազ:
 Այս երգից յետոյ Գահժառանգը ուղակի գնաց հօր մօտ
 և մելաւաղձ դէմքով նստեց ախուր ու մոայլ: Հօրը սիրտը
 բորբոքեցաւ նո չը կարողացաւ այդ տեսարանին դիմա-
 նալ ու ասաց:

— Մի հովկի — Իդունի աղջկայ համար ինչի ես այդքան
 խղճացել: Իդունը իր հովիւներով ու խաշներով թողել է
 Հանձիթն ու հեռացել: Միրելի զաւակո, մոռացիր այդ
 խաշնարածուհուն, չնչիր սրտիդ թերթերից նրա պատկե-

ըըն ու անունը, անհետացրու մտքիցդ նրա տխուր յիշա-
 տակը և մեր երկրի գեղանի քնքոյշ և բարեկիրթ օրիորդ-
 ներից որին որ ցանկաս, ընտրիր, երթամ խնդրեմ ու բե-
 րեմ քեզ համար:

III. ԵՐԻՑԱՍԱՐԴ

Այս որ լսեց Գահժառանգը, իսկոյն փարեցաւ
 հօր կրծքին, համբուրեց ու ասաց:

— Բարեգութ հայրս, ես այլիս ոյժ չունիմ այս քաղա-
 քում ապրելու, իմ այստեղ մնալս ինձ գերեզման կիշեց-
 նէ: Այս քաղաքի աղջիկներից և ոչ մէկը չի հրապուրում
 ու գրաւում սիրտս, Այլիս ինձ համար անհնար է այստեղ
 ապրելն անգամ: Կերթամ, եթէ Գիւլիզարիս չը գտնեմ,
 գոնէ նրան որոնելու ճանապարհին խաղաղ հոգով կը մեռ-
 նեմ:

— Զաւակս, մի յամառիլ, լսիր հօրդ թախանձանքին,
 մի գնալ, ինձ մենակ անմխիթար մի ձգիլ: Մի թողնիլ,
 որ այս ալկոր մօրուսս արտասունքներովս լւանամ գլշեր
 ցերեկ և որդուս կարօտի հառաջները սիրտս ծակծկեն,
 օրհասից շատ վաղ ինձ գերեզման իջեցնելով:

Բայց խրատ ու աղերս օգուտ չբերին, Գահժառանգը
 յամառած մնաց:

Երբ հայրը նկատեց, թէ իր յորդորները արդիւնք չու-
 նեցան, ասաց յուզւած:

— Գնա զաւակս, քեզ չեմ կարող կաշկանդել և դահիճդ
 դառնալ: Բայց եթէ օտարութեան մէջ կեանքդ դժոխքի
 մատնի, տանջւես, երբէք ինձ չը մելլաղընս: Գնա երբ
 ինձ չես լսում:

Գահժառանգը դուրս եկաւ հօր ապարանքից, խուր-
 ջինը ոսկով լքցրած գցեց իր ձիու Գամերի պաւակը, վեր-

աշխի զույն սկզ բրդան աղջառածնա ցմանա ու մզջ
բրդի հզդիմաց աղջառա վճարք մզջալ զմն և զման
մզ ու նմերմայ նան աղջառա սպանաք որ մզջո ըմիմ

պահան բաց նայ



Շահ-իսմայիլը զնում է Գիլիգարին զանելու.
ցրեց նիզակը, սուրն ու Վահանը, պատերազմ գնացողի
նման զրահաւորեց, պատրաստւեց ուղի ընկնելու. Այս
ժամանակ Գահժառանդի պատրաստութեան լուրը թագու-
հուն յայտնել էին նաժիշաները, որն եկաւ որդու մօտ,
աղերսեց, լացեց, թախանձեց, որ կամապաշտութիւն չա-

նէ, ձեռք քաշէ լեռնական հովեի իդունի աղջկանից և
իրենց սպի չը մատնէ: Բայց երբ Գահժառանդը մերժեց
նաև մօրը ինդիրը, այն ժամանակ Թագուհին ամուսնուն
ներկայացաւ և բորբոքւած տսաց.

— Գահժառանդը սիրակոնի ետեից է գնում, ով գիտէ,
ինչ փորձանքների կարող է մատնւել: Ել դու ինչ թա-
գաւոր ես, որ չես արգելում, չես կարողանում միակ որ-
դիդ զսպել: Միթէ վայել է, որ թագաւորի միակ որդին
սարէսար ընկնի մի հովեի աղջկա համար և մեզ այսպէս
մորմօքի ու տանջանքի մատնէ:

Թագաւորը բորբոքւած հրամայեց քաղաքի մուտքե-
րի վերատեսչին, որ փակեն դոները, փականքները պահեն
և իրենք էլ պատսպարւեն աշտարակներում: Բայց Գահ-
ժառանդը առանց իմանալու, թէ դոները, դարբանները
փակւած են, նստաւ Գամէր ձին ու ճանապարհ ընկաւ:
Այս որ տեսաւ թագուհին, գլխի մազերը պոչկելով լալա-
զին որդուն դիմաւորեց և ասաց.

— Ո՞ւր ես գնում, զաւակա: Դու մի թագաւորի որ-
դի լինես ու մի հովեի աղջկայ ետեից ընկած, լեռներ
թափառես:

Այս որ լսեց սիրով վառված Գահժառանդը վերցրեց
թիկունքին կախած տաւիղը և երգելով պատասխանեց
մօրը.

Մայրիկ, կաթդ հալալ արա,
Աչքիդ արցունքն էլ վար արա,
Սիրոյ ցաւի տէրը դառայ,
Վիշտս չունի չափ ու համար:

Հայրս վիշտը չի ըմբռնում,
Կարօտից է թոքս վառում,
Ես գնում եմ, մայրս է ողբում,
Դու ինձ հասիր իմ զատ արդար:

Ինչիս է պէտք կայք ու կայանք,
Զեռք եմ քաշել, պէտք չէ ինձ կեանք,
Չի կոբցրի իմ օթևանն,
Դին ու արժէք չունի աշխարհ:

Չիս թամքեցի թողի քայլին,
Բլբուն երգեց արևպալին,
Հայրիկ, բազմիր պապիս զահին,
Մի կործանիլ նախնի օջախն:

Հեծայ ձիս ու ճամբայ ընկայ առանձին,
Արձագանքներս քառսուն մղոն զնացին,
Ինքս ինձ դարձայ առաջնորդ թէ խրախոյս,
Մորակեցի, նպատակիս զնացի:

Թուրքերէն

Անա, սիւդիւն հալալ էյլէ,
Գէօվլէրինդէն թօքմա արի,
Նայիլ օլդըմ բէն բու դէրգէ,
Ասլա դէրդիմին եօխ տուր հեսարի:

Նէ բաբամ դէրդիմի անզլար,
Բու հասրաթ ջիգէրմ դաղլար,
Բէն գիգէրիմ անամ աղլար,
Իմզադ էյլէ չագգ ջէնաբի:

Նէ յնէրիմ դիւնեանըն վարի,
Թէրք էդէրիմ բու դիարի,
Չուն դաշրդըմ նազլի եարի,
Դիւնեանըն եօգ դըր դարարի:

Գամէր թայա վուրդըմ զէնգի,
Բիւլբիւ օթէր սահար վախթի,
Բաբամ բօշ դօյմամըն թախթի,
Ելխլըր թաջ ու մէհրաբի:

Գամէր թայի սալլըմ եօլա,
Զղղղըմ ըրբլարը բիլա. Խիր ըշներաց
Իմզադ էյլէ Շահ-Խոմայիլա, Խիմողէմ
Օլայզըմ խարի թիւրաբի. Աղջախաղը

Այս երգից յետոյ ձին մտրակեց, ճամբայ ընկաւ,
Եկաւ քաղաքի պարիսպների մօտ, տեսաւ, որ բոլոր
դարբասները փակւած են, պահապաններն էլ թագ նն կա-
ցել. Խոկոյն նժոյգ ձին մի երկու անզամ ետ ու առաջ
մղեց, մտրակեց, բորբոքեց և խիստ արագութեամբ դըռ-
ների վրայ քշելով, իր լախտով մի այնպիսի հարւած
հասցրեց, որ դուն տախտակները փշրւեցան, թափւե-
ցան, կտրիմը ձին քշեց դուրս եկաւ. Այստեղից մէկ
գլուխ ձին մտրակեց գէպի հանձիթ, հասաւ այն աղբիւ-
րի մօտ, որտեղ առաջն անզամ սէրը իր սրտում օթևան
գտաւ. Այս յիշատակարանը փոթորկեց սիրահարի սիրտը,
յուղեց, մրբկեց նրա հոգին. Նա տափիղը ձեռքն առաւ
և սրտին կուտակւած վշտերը այսպէս գուրս մղեց:

Ես միամիտ թմրած էի խաւարում,
Սիրտս սիրոյ հրով լցւեց այն սարում.
Փախչող սիրուս խորհուրդը չեմ ըմբռնում,
Սիրով հոգիս վառեց, գնաց, ի՞նչ անեմ:

Զգիտեմ հրեշտակ էր, թէ յաւերժահարս,
Պէտք է գտնեմ իմ նազէնի սիրահարս,
Փթթել է նորա այտ, շուրթ, ոռնգ ու վարս,
Սրանց շողը խելքս տարաւ, ի՞նչ անեմ:

Բլբուլի երգ Գահմառանզն է հասկանում,
Եարից անջատ երկրից-երկիր թափառում,
Վառսուն գաւաթ սիրոյ նեկտարով արբած
Ճար չըպտայ, պանդուխտ ընկայ, ի՞նչ անեմ,

Թուրքերէն
 Եաթմիշ իդիմ բէնդա խարը զաֆէթդա,
 Դէրունիմ աշգ իլէ առզի, նէյնիյէմ,
 Երանլարըն սըրբի բիգա զալիբ դըր,
 Սէվդաը սարիմա սալդը, նէյնիյէմ:
 Իլլմամ մէլէք մի դըր, եօխսա մի հիւրի,
 Արայըր բուլմալի օ նազի եարի,
 Ղաթմար ղաթմար օլմուշ յիւղունուն նուրի,
 Անըն շակը ագլմ ալզի, նէյնիյէմ,
 Շահ-Խսմայիլ բիլիր բիւլբիւլ դիլնդան,
 Այըր դիւշդըմ շիմդի նազի եարըմդան,
 Բաղէ նուշ էյլէդիմ բրբլար էլինդան,
 Եօլումուզ դուրբէթէ դիւշդի, նէյնիյէմ:
 Ասաց ու ընկզմեց մաքերի ծովը, անցեալը աղբիւրի
 Ջրերի նման եկաւ սահեցաւ աչքերի առաջից, իրեն
 Քաղցր յիշատակների հետ, դտան վշտերը նորից բորբոք-
 վեցան: Աղա նստեց ձին աշտանակից, հեռացաւ աղբիւրի
 մօտից, հասաւ այնաեղ, ուր բարակներին արձակել էր
 եղնիկի ետևից, որոնք իրեն առաջնորդել հասցրէլ էին
 Գիւլիզարի վրանը: Այստեղ դարձեալ յուղւեցաւ, փոթոր-
 կեցաւ սիրահարի սիրտը և տափիզը ձեռքն առներով ձայ-
 նը հասցրեց սարի այն ժարուտ լանջերը, ուր մի ժամա-
 նակ իր սիրեկանն էր ապրել կայտառացել, իր թոքը վառել.
 Հոս շունս մղեցի եղնիկի վրայ,
 Մոխիր արի անձս, ցրւեց փոշենման,
 Թողի հայրենիքս ընկայ սարէսար,
 Մարգեր, արդեօք Վարդիթերիս դուք տեսամք:
 Խելքս ցնորելուց ընկայ սարէսար,
 Ճամբէն շիմանալուց դիպայ քարէքար,

Ես ինչ արի վարդիս, որ սիրտս խրեց, դդոյն բարսի
 Մարգեր, արդեօք Վարդիթերիս դուք տեսամք: Այդի
 Գահմառանզն էլ յուսակտուր կորչում է,
 Խելքն ու միաքը ցլուր հեռու թոչում է, Այս մարդերում որոր մոլոր շրջում է,
 Մարգեր, արդեօք Վարդիթերիս դուք տեսամք:
 Թուրքերէն
 Բէն թազմը բունդա սալդըմ ջէյրանա,
 Բիւլօրու վիջիւղում, դէօնդիւ փիւրեանա,
 Թէրք էթմիշ վաթմանի գէթմիշ բիր եանա,
 Եայլա, բէնիմ Գիւլիզարըմ գէօրդիւն մի:
 Բէնի մէջնուն էդիր դաղլարա սալդի,
 Գիթդիյի եօլլարը բիլմէիր շաշդի,
 Բէննէ էդէմ, գիւլիւմ բէնիմ ջիգէրիմ դէլդի,
 Եայլա բէնի Գիւլիզարըմ գէօրդիւն մի:
 Շահ-Խսմայիլ զալիր լափ մահգուն գիդիր,
 Ախու ու Փիքրի բաշզան բիր բաշզըր ուչիր,
 Բու եայլայա մէլիլ մէլիր սուս բախիր,
 Եայլա բէնիմ Գիւլիզարըմ գէօրդին մի:
 IV Ս ի Ր Ա Զ Ո Ւ Ի Ր Կ

Ասաց ու դարձեալ լոեց: Ապա բարձրացաւ, ձին
 հեծաւ, հեսացաւ այդ վայրից հասաւ այնտեղ, ուր իլու-
 նի վրաններն էին բարձրացած այն ժամանակ: Զննեց
 այդ ամայի լեռնալանջը, քննեց շրջապատը, ոչ ոք, ոչ մի
 կենդանի չը տեսաւ, նոյնիսկ ծեղ ու ճիպոտ խաղացող երե-
 խաներն էլ չերեցան: Խոտը մարդաբօյ բարձրացել էր վրան-
 ների տեղը, ծածկել էր ծտնօթ ապառաժի կտորները և

վազող ջրերի ակերը, Այն ճոխութեան հետևող ամայուց
թիւն ու մենակութիւնը աբիւն արտասունք թափել տեխն
գահաժառանգին, որը յուզւած կրկնին վեր առաւ իր տառիդը
զբնացնելով դղրդացրեց նոյնիսկ անզգայ ապառաժնելը,
որոնք միակ ունկնդիր էին հանգիսաննաւմ քաջին:

Մուլթ ամպերումն խրւել են բարձր սարերն,
Աչքիցս հոսած արցունքն դարձել է հեղեղ.
Մի հարցտամ ձեզ կանանչ ու դալար մարդեր
Մարդեր, Վարդիթերիս դուք իսօ չէք տեսեր
Զիտէք Մաննա գնաց, թէ դէպ Դարանդաշտ,
Դուցէ իսպառ չւեց, հասաւ մինչի Ռաշտ,
Արդեօք օտարին խօսք տւեց, կապեց դաշն,
Հեղեղ, Վարդիթերիս դուք իսօ չէք տեսեր

Զիտէք թէ Մոկս գնաց, դուցէ թէ Խալիստ
Մատաղ կեանքս մատնեց բոցերի շատ վաղ.
Դաշտու հովիտ արդեօք ձեզնորից հարցտամ,
Մարեր, Ժայրեր, Վարդիթերիս չէք տեսեր

Կոհնւնկ, քիչ ցած իջիր, հերիք բարձրացար,
Արդեօք դու չես բերում եարից մի խարար,
Աշունն հասաւ, տերիթափ եղաւ անտառն,
Անտառ, Վարդիթերիս արդեօք չըտեսմը:

Եարիդ խօսքին, Գահժառանգ, դու հաւատաց
Սրտիդ հուրը մի բորբոքիլ, հաւատաց,
Մատաղ հոգին քեղ չի դրժել, հաւատաց,
Ճամբար, Վարդիթերիս արդեօք չտեսմը:
Թուրքարար ուրբաթ թուրքերէն
Գէնա ուջադաղլար չէօքմիջ դումանա,
Ախտի չշշմիմ եաշի, դէօնդիւ իւմմանա,

Բիր խաբէր սօրայըմ չայիր, չիմանա,
Չիման, բէնիմ Գիւլիզարըմ գէօրդիւն միտք մի
Բիլմէմ Մաննա գիթզի, Եօխսա Մուղանա,
Բիլմէմ բու դէրգիմի գէսէմ քիմէ նա,
Աջար քիմլար զօնդու նազլը եարիմա,
Սէլլար, Գիւլիզարիմի գէօրդիւգ մի:

Բիլմէմ Մարա գիթզի, բիլմէմ Խալիստար
Գէնջ եաշմդա բէնի սալդի աթաշա,
Բիր խաբէր սօրայըմ դադ իլէ թաշա,
Դաղլար, թաշլար Գիւլիզարիմ Գէօրդին մի:

Եուքսաքլարդան գեալան գէչան գուրնալար,
Ալաբիլիրմիջիմ սիզդան բիր խաբար,
Դիւղ գէլդիքջէ թէօքար դազէլի բաղլար,
Դիւլլար, Գիւլիզարի գէօրդիւգ մի:

Շահ-Խսմայիլ բէնդ օլ եարըն սէօղընա,
Բիր օթ դիւշմիջ իւրէգիմին իւսթընա,
Դահա թըֆըլիքէն դիւշդըմ վէշինա,
Եօլլար, Գիւլիզարըմի գէօրդիւղ մի:

Այս քառեակն ասելուց յետոյ, հեծաւ ձին ճանապարհ ընկաւ դէպի արեելք: Մի օր հինգ օր թափառելուց յետոյ, ամեն մի տեղ հարց ու փորձի ենթարկելով մի տմսից յետոյ մտաւ Մուղանի դաշտը: Հետուն մի հսկայական և գեղեցիկ պարագ տեսաւ, որի շուրջը առուներն ու ջրանցքները ամբողջ անապատը ոռոգել դրախտի էին վերածել այգեստանով, վարդաստանով, բընձի, բամբակի զմուռիտ մարկերով ծածկել էին ողջ դաշտը: Երբ մօտեցաւ պալատին աչքերը ծակուեցան ապարանքի ամբողջ ճակատի շուրբից, կորնիչից մինչև հիմքը մարմարի ու ագաթի նման փայլում էին որմերի որձաքարերը,

լուսամուտների ապակիները, պատուհանների շրջանակների զարդարների մէջ գետնդած խոշոր խոշոր գոհաբանները: Գահժառանդը այս կողմը շրջեց, այն կողմը դարձաւ, ետ դնաց, առաջ եկաւ և պալատի դուռը չը գտաւ, Շրջապատի բնական հարստութիւնն ու զեղեցկութիւնը կերտել էին այդ սքանչելի գեղարւեստական պալատը, և այնպիսի դիւթական ձեւ տւել, որ մօտեցողը նրա դուռը հեշտութեամբ չէր կարող գտնել: Այս պարագայից հետաքրքրւած, քաշեց թիկունքից, տաւիզը ձեռքն առաւ ու երգեց գեռահաս իշխանը, որ սիրոյ կրակից գուսան էր դարձել:

Խոլմանդարից եկայ Մուղան,
Չիտեմ անցըլ գաղտնի դռան,
Մի բորբոքել սրտիս կրակն,
Յոյց տուր ինձ քո մուտքը, պալատ,

Ո՞վ է շինել հակայ կերտւածն,

Որքան ցրեղ է հիմք դրւած,

Յաւերժ ազրի ճարտարապետդ,

Յոյց տուր ինձ քո մուտքը, պալատ

Դուռ չունիս, ներս նրդից մատչեմ,

Թև չունեմ, ներս ի՞նչպէս թոչեմ,

Զուր էլ չըկայ, պապակս առնեմ,

Յոյց տուր ինձ քո մուտքը, պալատ

Քեզ հիւր եկաւ մի Գահժառանդ,

Գեղ շինւածքիդ ուխտի եկաւ,

Հերիք թունես արևի տակ

Պալատ ներս առ ինձ, տուր շւար:

Թրւթերէն մասնափառ թրւթերէն մասնափառ

Խոլմանդարից գեալգըմ սանա

Սարայ սանդան եօլ իսթէրըմ,

Բէնի սավմա եանա-եանա, Արարաքար ողոն
Սարայ սանդան եօլ իսթէրըմ:

Քիմ եափմը բունուն եափուսի, Նէ եիւքսէք գուրը ուշ բինասի
Բուլայդըմ եափան ուստասը,

Սարայ սանդան եօլ իսթէրըմ:

Եօգուր գափուսը գէչէյիմ, Գանատըմ եօխ դըր, ուչայըմ,
Բիր սու վէրըն գանա-գանա իչէյիմ,
Սարայ սէնդան եօլ իսթէրըմ:

Շահ-իսմայիլ գեալգի սանա, Սէնդէքի օլան Միհմանա, Բէնի զօյմա եանա-եանա,
Սարայ սէնդան եօլ իսթէրըմ:

Երկից յետոյ նորից զննեց պալատը, բայց ոչ մի գուռ չը գտաւ, որ ներս մտնի: Իսկոյն ձին առաջ քշեց, պալատին մօտեցաւ, լախտը շարժեց, բարձրացրեց և մի այնպիսի ուժեղ հարւած իջեցրեց, որ պալատի որմը մի ձիաւոր ներս մտնելու չափ բլւցաւ, թափւցաւ: Առանց մտածելու ներս մտաւ, ձին բակում կապեց, առաջը գարի լցրեց և ապա ինքը սանդուխներից վերի յարկը բարձրացաւ: Երար մէջ մի քանի սենեսմիներ մտնելուց և ամայի գտնելուց յետոյ, կանգնեց մի վարոգուրած դըռան առաջ: Վարագոյը բարձրացրեց, որ ներս մտնի, յանկարծ աչքն ընկաւ մի գեղանի կոյսի ապշած ու զարմացած գէմքին, որը բազմոցին նստած քեարգեանի վրայ ասենագործում էր: Թշւառ կոյսը և գործում էր, և լալիս, իսկ արտասուքի վոխարէն նրա աչքերից արիւնի կաթիլներ էին ցած գալիս, թոշում կուրծքն ու գաստակ-

ները։ Կաշկանդւեց ու կարկամեց ինքը Գահժառանգն էլ։
Նա չը համարձակւեց ներս մտնելու, Մի քանի բողէ ա-
պուշ կտրած իրար դիտելուց յետոյ, կարիճը կոյսին, կոյ-
սը կտրիճին զննեց, գրաւեցան և պատանին սթափելու
պէս, ձեռքն առաւ տափին ու երգեց.

Ես վիշտ ունեմ քո ցաւերից շատ վատթար,
Ասա, փէրի, դու էլ ի՞նչի մաշեցար,
Գաղտնի ցաւդ ինձ տուր, ես սրտիս բառնամ,
Պատմիր, փէրի, դիր իմ սրտին ցաւկի պարկ։

Բարի եկար, նստիր, դարդիս մեծ դեղտուր,
Դարդս շատ է, կտրիճ, խօսքդ կանցնի զուր,
Աշխարհ թէ դեղ դառնայ, վէրքս չի լաւնար,
Սննուն վիշտից ես քեզ ի՞նչպէս հաշիւ տամ։

Շահ-Իսմայիլ

Հարկ է, հոգիս, բժիշկը ցաւդ իմանայ,
Պէտք է կարօտս առնեմ քեղնից, հովանում,
Բաղուկ ունեմ, որ սուր շարժեմ քեզ համար,
Պատմիր, փէրի, դիր այս սրտիս ցաւիդ պարկ։

Փէրի

Ֆալաքն ինձ հալածեց, պլուխս է ցուռում, սառա
Աչրից անփերջ արիւն արտառունք եմ քամում,
Եօթը եղբայրս թշնամու դէմ են կուռմազար
Ահա վիշտո, ատա, որին հաշիւ տամ։

Շահ-Իսմայիլ

Նազանի շարժումիդ էլ չեմ դիմանար, ծայսն
Սիրսս բորբոքեցին խօսքերդ շաքար, զարարձա
Զիջիր, փէրի, էլ մի ծածկիւ վիշտ ու ցառ,
Պատմիր փէրի, դիր իմ սրտիս ցաւիդ պարկ։

Փէրի

Գերի դառնամ անուշ խօսքերիդ ձայնին,
Թէ ճամբորդ ես, կտրիճ, գնա քո գործին,
Խնայիր ինձ նման թուլակազմ խեղճին,
Կտրիճ, դարդս շատ է, ի՞նչպէս հաշիւ տամ։

Շահ-Իսմայիլ

Ճիշտը պատմիր, փէրի, ցաւդ հասկանամ,
Դյուխս զոհ գնեմ քո կեանքի համար,
Ամեն առսակ ցաւիդ կանեմ դեղ դարման,
Պատմիր, փէրի, դիր իմ սրտիս ցաւիդ պարկ։

Փէրի

Լմիր, կտրիճ, խեղճիս ուղիդ խօսքերուն,
Ինձ ի՞նչ, թէ զոհւում ես խէյրին ու բարուն,
Եօթն եղբայրս են կուի դաշտում մաքառում,
Ահա վիշտո, դարդիր, ի՞նչպէս հաշիւ տամ։

Շահ-Իսմայիլ

Վաղուց է չըտեսայ դէմքդ, սիրական,
Վարդ քաղելու համար չըմտայ բաղչան.
Դեռ չըհասաւ իր մուրազին Գահժառանգ,
Ասա, փէրի, դիր իմ սրտիս ցաւիդ պարկ։

Փէրի

Այդ նը երկրից եկար, հոգոյն կենաբոյըն,
Քեզ մատաղ Գիւլ փէրին, եղաւ անձնատուր,
Ինչի՞ կործանեցիր ապարանքիս բուրգն,
Տէրս, այս է վիշտո, ի՞նչպէս հասկացնեմ։

Թօփքերէն

Բէնիմ բիր դէրդըմ վար սանդան բէշբէթար,
Սօյլէ, փէրի, նէ զըր դարդըն բիլէյիմ,
Գիզի գարդարընա գարդար զաթայըմ
Սէօյլէ, փէրի, դէրդըն նէ զըր, բիլէյիմ։

Փէրի

Սափա գեալդըն, օժուը դարդըն վարի,
Դարդըն չոխ դըր, սանա նի՞ջէ սօյլէյիմ.
Ալէմ թարիք օլսա դէրման բուլունմազ,
Դէրդըն չոխ դըր, սանա նի՞ջէ սօյլէյիմ:

Բէն սէնին դէրդըն բիլսամ գեարաք դըր,
Հասրաթիմի սանդան արամ գեարաք դըր,
Գոլում օյնար, գըլըջ չալսամ գեարաք դըր,
Սօյլէ, փէրի, դէրդըն նէ դըր, բիլէյիմ:

Ֆալաք վուրդունիյըմ, աղլրըր բաշըմ,
Դիդէմ զան աղլայուբ թէօքէր գէօգ եաշըմ,
Դիւշմանա գեօնդարդըն եղի գարդաշըմ,
Դէրդըն բու դըր, սանա նի՞ջէ սօյլիյէմ:

Տայանամտմ էդասընա, նաղընա,
Բու գէմգէմ սիւքքէր կիսի էօգընա,
Գեալ հէյ փէրի, բէնվիք էթմէ էօգիւնա,
Սէօյլա, փէրի, դարդըն նէ դըր, բիլէյիմ:

Ղուլ օլայըմ սէնըն շիրին դիլընա,
Եօլզու իսան վար դիդ դօղըու եօլունա,
Րահմ էյլէ գեալ բէն թէք մէջնուն դուլընա,
Իգիթ, դէրդիմ չոխ դըր, նի՞ջէ սօյլէյիմ:

Տօղրու սօյլէ, փէրի, դարդըն բիլէյիմ,
Ուղուընա ջանըմ ֆէղահ լլայըմ,
Հէր թիւրլու դարդընա դէրման օլայըմ,
Սէօյլա, փէրի, նէ դըր դարդըն բիլէյըմ:

Թիյնա իգիթ բէնդան դօղըու ջէվարը,
Նէյլէմ սէվարսըն խայը ու սէվարը,
Եղի գարդաշ չեաքար գէօնիւլ էգարը,
Դարդըն բու դըր, սանա նի՞ջէ սէօյլէյիմ:

Խայլի դէմ դըր, եար, ջէմալըն գէօրմադըմ,
Գիրիք բաղչասընա գիւլըն դէրմադըմ,
Շահ-իսմայիլ բէն մուրապա էրմադըմ,
Սէօյլա, փէրի, նէ դըր դարդըն բիլայիմ:

Այսան նէ ախարդան գեալդըն էօմրիւմըն վարի,
Նիչին վուրդըն, ելստըն բուրջուն հիսարին
Այս Սանա դուրբան օլուն սլու Գիւլի փէրի, ին չ
Աղամ, բու դըր դարդիմ նի՞ջէ մէօյլէյիմ:
Այսան նիչ ախարդան գեալդըն էօմրիւմըն վարի,

Այստեղ փէրին խոստվանեց, որ ինքը սիւում է մի
գեռահաս կտրիճ և վէս իշխանի. բայց եղբայբները նը-
րան թշնամի լինելով չեն տալիս: Եթէ մի հնարով կարո-
ղանայ ինքը թշւառ սիրահարին հասցնել բաղձանքներին,
այնժամանակ յափտեան նրան պարտական պիտի մնան
ամոլները: Այդ գեռահաս իշխանը ապրում Մուղանի ծայ-
րին. որի բերդը ահ ու սարսափ էր սփոել շըջակայ երկ-
րում: Այնքան հակառակ էին եղբայրներս այդ կտրիճին,
որ պատրաստ էին իրենց քրոջը կտրտել թափել Արաքսի
ձկներին, քանթէ յանձնել վէս փէսալին: Գահժառանգը
խոստացաւ ինքն ձևականօրէն կնութեան առնել Փէրիին
և ապա հասցնել մուրապին, տալ սիրած կտրիճին:

Թահժառանգը Փէրիի հետ այս երգերը երգելոց,
նւազելուց և խորհուրդները պարգելոց յետոյ, նստան մի
ճոխ սեղանի, որ պատրաստել էին իշխանունունաժիշանե-
րը և քաղցրահամ խորտիկների հետ ճաշակում էին հասած
գեղձերը, որոնք անսպառ չափով հասել, կարմրել և գար-
դարել էին պալատի պարտէզներն ու այգիները ներկաց
ու դրսից: Անուշաբոյը նեկտարի հետ, քաղցրաբոյը մըր-
գերը, փասեանի խորովածն ու կարմրախայտի խաշածն
այնպէս ոգևորեցին գեռահամներին, որ նրանք երկար ժա-
մանակ այս ախորժելի սեղանից չըկարողացան հեռանալ:

Երբ կերան կշտացան, Գահժառանզը դարձաւ իշխա-
նուհուն ասաց.

—Երգիդ մէջ զու յայանեցիր, թէ եղբայրներդ գնացել
և պատերազմում են: Ասա, աղաչում եմ, ուր են գնա-
ցել, ի՞նչի են պատերազմում:

—Այս մեր դիմացի կովկասեան լեռների հիւսիսյին
լանջերում Տետօններն են ապրում, որոնց առաջնորդում
է մի հարիւր յիսնամեայ ծերուկ Խաթթար անունով: Այս
զառամեալը իր եօթանասունը եօթը, որդիներով, թսոնե-
րով ու ծոռներով մեր վրայ պատերազմի է եկել և ա-
ռանց կարմրելու ինձ կութեան է ուզում: Յայտնի բան
է, եղբայրներս մերժեցին աներես ծերունի բռնաւորին,
որի համար կոխւ ծագեց և ահա եօթն ամիս է մարտըն-
չում են կողմերը, մի բժժած ծերուկի տմարդի քմհաւ-
ճոյքի համար: Այս գիշեր մի տիսուր երազ տեսայ, իրը
թէ երկու եղբայրներս զո՞հ էին գնացել այդ անիրաւ պա-
տերազմում: Մրանից յետոյ, ասա ինձ, իշխան, ես ինչ-
պէս չողբամ այս թշւառ վիճակս, որ իմ պատճառով բեր-
դի նման երկու քաջ եղբայրս ինձ համար զո՞հ ընկան:

Գահժառանզը վեր կացաւ սեղանից, շնորհակալ եղաւ
իշխանուհուց, հարց ու փորձ արտւ ճանապարհի մասին և
Գամէր ձին դուրս քաշելով, հեծաւ, ուղի ընկաւ դէպի
կուի դաշտը, Երկար թէ կարճ գնաց, այդ պատմութեանն
անյայտ է, լեռները կարեց, անցաւ դէպի հիւսիսյին
կովկաս: Լեռան բարձունքից զննեց Գահժառանզը տեսաւ
որ երկու բանակ իրար դէմ կանգնած կոխւ են մղում: Մի
կողմը բազմութարդ, դրանք Փէրիի եղբայրներն էին իրենց
մերձաւորներով:

Վ. ՊԱՏԻՐ Ա Ջ Մ Հ Ո Ւ Շ Ե Շ Տ Ց

Լեռան լանջից վար իջնելիս Գահժառանզն ինքն ի-
րեն մտածում էր.—թէ քչորի մօտն երթամ, պիտի ա-
սեն—մեծամիտ է, ուզում է գլուխը ցոյց տալ, թէ շատ-
ւորի կողմն անցնեմ, պիտի ասեն—վախկոտ է, ուժեղի
կողմն անցաւ: Երկար խորհելուց յետոյ, գնաց, մտաւ եր-
կու կուղների մէջ և ողջոյն տեեց: Շատւորներն ուշք
չը դարձրին, իսկ Փէրի եղբայրները իսկոյն նրա բարեկին
պատասխանեցին: Դւանից յետոյ, տաւիղը ձեռքն առաւ
և հինգ եղբօր բանակի սահմանը մտնելով սկսեց նւագել
ու երգել:

Բարձը սարի գլխից տեսայ աջ ու ձախ

Ցրւած անխնայ բլւրաւոր դիակ.

Հեռու են հայր ու մայր, որ տանեն խնամք,

Արդար արև, ամպեր, ձեզ վստահացայ:

Ո՞չ աշխարհիս գաղանն, ո՞չ Երկնի թոչուն

Նմաններին չեն պատառում, գիշատում:

Պէտք է օգնել անմեղ եօթ եղբայրներուն,

Արդար երկնք ու ցող, ձեզ վստահացայ:

Արև, լուսին, աստղեր, կանչում եմ վկայ,

Թէ իմ սրտում երբէք քէն ու ոփ չկայ,

Ես կուի հաշտութեան համար դաշտ մտայ,

Արդար փայլակ, կայծակ ձեզ վստահացայ:

Դիմացս կանգնած է մի հսկայ բանակ,

Սէրս ինձ շնորհել է խրախոյս ու նիզակ,

Բոնաւորը կրպորի անկասկած,

Արդար կրակ ու բնց ձեզ վստահացայ:

Գահժառանզը եկաւ, իջաւ հրապարակ,

Մտրակեց ձին գոռ թշնամուն հակառակ:

Կարմիր արիւնի մէջ ներկեց սուր, զաստակ,
 Արդար երկնք, արև, ձեզ վստահացայ:
 Թուրբերէն
 Ու ջա դաղ բաշնդա սաքին էյլադրմ,
 Աման Ալլահ, աման, սէմ իմզադ էյլա՛,
 Էօդ դըր անամ տթամ, բէնի զայըրա,
 Աման, Ալլահըմ, գեալ, սէն իմզադ էյլա՛:
 Եարատդըն ադամի, համադա զուշի,
 Հիւքմընդան թիթքադդըն դաղ իլա դաշի առար
 Մէվլում, սէն գեալ զուրթար եղի զարդաշի
 Աման ալլահ, աման, սէն իմզադ էյլա՛:
 Եարաթդըն զիւնէշի, ջիւմլէ ալամի,
 Հէր վազթ օփունուր իսմի, քէլամի,
 Վարալըմ, վէրէյիմ թանդըր սէլամի,
 Աման, Ալլահ, աման, սէն իմզադ էյլա՛:
 Զարշըրա գէօրիւնուր բիր բօյիւք օրդի,
 Մէվլամ բանա վէրդի բու աշգ ու դարդի,
 Գիթտի Գիւլլարըմ, բօշ դարդի եռորդի,
 Աման, Ալլահ, աման, սէն իմզադ էյլա՛:
 Շահ-Իսմայիլ գեալդի գիրդի մէյզանա,
 Սուրէմ Գամէր թայի, վարամ զիւշմանա,
 Զէքէմ զիւլֆիխարի բօյանսըն դանա,
 Աման, Ալլահ, աման, սէն իմզադ էյլա՛:
 Քառեակները ասելուց յեաոյ, ձիուց վար թռաւ, Գա-
 մէր ձիու փոքաշը հօթը անդից պնդացըրէց, կրկին հե-
 ծաւ, դուրս քաշեց սուրը պատեանից, յարձակւեցաւ Տե-
 տոնների վրայ: Յուզւած ու բորբոքւած սրտով Գահժա-
 ռանդը այնպէս սուր շարժեց, որ գերսնդու: Նման ջար-
 դեց ու քաղեց անհաշտ թշնամիներին, կարմիր արիւնով

Ներկեց դաշտը, փոթոքէց, մըրկեց ու փախցրէց մնացող-
 ներին, ինքն էլ յոգնած գաղրած քաշւեց դրազ, իջաւ
 ձիուց, նստեց հանգչելու: Այսպիսի սաբսափ սփրեց այս
 յարձակումն ու կոտրածը, որ ոչ միայն թշնամիները
 թողին կուի դաշտն ու անհետացան, այլ նոյն իսկ Փէրիի
 հինգ եղբայրները երկվողներից լոխի, մնջիկ մի կողմ քաշ-
 ւեցան, խորհրդակցելու: Կասկածելով թէ մի գուցէ իրենց
 էլ կոտորէ գեռահաս հերոսը, խորհուրդները իրար հետ
 փոխանակելուց յետոյ, փոքրիկ եղբօրը պատգամաւոր ու-
 ղարկեցին, որ ներկայանայ քաջին, իրենց խորհին շնոր-
 հակալութիւնը յայնէ և տուն հրաւիրէ, մտանակցելու
 իրեց սեղանին և ուրախութեան:
 — Եթէ սա մեզ թշնամի լինէր, ինչի պիտի գար օգ-
 նութեան կղլուխը վտանգի մատնած մեզ համար կուէր:
 Կասկածներդ սրտերից դուրս հանեցէր, ևս կը գնամ,
 մեր երախտապարտութիւնը կը յայտնեմ և կը հրաւիրեմ,
 ասաց փոքրիկն ու մտադրութիւնը կատարեց:
 — Շահ-Իսմայիլը ընդունեց հրաւէրը և հինգ եղբօր հետ
 ճանապարհ ընկան գէպի Մուզան: Երբ իշխանների պա-
 լատին մօտեցան, փոքր եղբայրն առաջ ընկաւ, որ շուպ
 համնի իրենց ընակարանն և պատրաստութիւն տեսան
 հերոսին արժանավայել ընդունելու: Նա մօտեցաւ պալա-
 տին ու նկատեց աշտարակի քանդւածքը, սաստիկ գրգը-
 ւեց, շտապեց տուն, մտքումն ասելով: Օսաոր հոգի, մենք
 քեզ համար կուէ դաշտում մաքասենք, երկու եղբայրս
 զոհ գնան քու պատի համար, իսկ զու պալատի բուրգը
 քանդել տուր, որ հոմանիներիդ ներս ընդունես և զւար-
 ճանաս: Ես քեզ կատու-կառը կանեմ և մեծ կսորդ՝ սիամ: Չդ
 կըթողնեմ:
 Այս տխուր մտքերով բորբոքւած, երբ մտաւ սենեա-
 կը, տեսաւ, որ անտիական անմեղ օրիորդը նստել էր
 թախտին, քարդան առաջին ասկզնագործում է: Այդ

հոգեկան անդորրութիւնն ու անմեղութիւնն այնպէս սահ-ձեցին բարկացած կտրիճին, որ նրա զայրոյթը մեղմեց, փոխանակ սուրը քաշելու, լեզուն գործ դրեց և հարցուց:

— Քոյրիկ, այստեղ ով եկաւ. ովքանդեց աշտարակը:

— Մի սպիտակ քաջ ձիաւոր եկաւ, լախտի մի հար-ւածով քանդեց, ներս մտաւ և երբ իմացաւ, թէ դուք կուի դաշտում էք, թողեց պալատը, ձեզ օգնութեան դնաց,

Իսկոյն հասկացաւ, որ իրենց օգնութեան հաս-նող հերոսը միայն կարող էր աշտարակի կրաշաղաղ քարէ որմէրը մի լախտի հարւածով քանդել ուստի լոեց և ասաց:

— Ե՛լ մի նստիլ, վեր կաց, պատրաստութիւն տես, եղբայրներս դալիս են այդ դեռահաս հերոսի հետ, յաղ-թանակած, յոդնած ու տանջւած, պէտք է նրանց ուտելիք պատրաստել:

Իսկոյն Փէրին հարկ եղած պատրաստութիւնը տե-սաւ, մինչ այս գանձառանզն էլ չորս եղբոր հետ տուն վերադարձան, Նոտան հանգչելու, սեղանները բացւեցան, զինին ու օշարակը հրապարակը իջան, կերան, խմեցին, վայելեցին և սրտերն ու սուերը (գաղտնիք) իրար բա-ցատրեցին և Գանձառանզը տարածւեց հանգստանալու Այս ժամանակ հինգ եղբայրները առանձնացան խորիւ-դակցելու և վճռեցին այն մեծ օգնութեան փոխարէն, իրենց քրոջը Շահ-իսմայիլին տալ: Ապա եկան ներկայա-ցան քաջին և իրենց որոշումը յայտնեցին.

Յայտնի բան է Գանձառանզը չը հակառակւեց, բանի որ ինչպէս գիտեն լնթերցողները, նա վազուց պայմանա-ւորած էր իշխանուհու հետ, որ նորան մի կերպ դուրս բէ-րէ եղբայրների իշխանութեան տակից և հասցնէ մուլազին, Հարսանեկան ուրախութիւն կատարեցին և չքնաղ Գիւլ-Փէ-

րիին ամուսնական խորանը տարան, յահճնեցին Գանձա-ռանզին:

Ուրախութեան, զւարճութեան և պէս պէս զինիների ու օշարակների չափ ու սահման չկար, Եօթանասուն ի-ջևան հեռաւորութիւնից եղբայրները արդ ու զարդ էին բերել տւել, իրենց քրոջը շուշանի ու վարդի նման զարդա-րել և փեսային յահճներ: Փէրիի և Գանձառանզի սէրը լինելով մաքուր անարատ սէր, ամեն գիշեր՝ երբ անկո-ղին էին մտնում, իշմանը պատերազմի դաշտը ներկող սուրը պատեանից հանում և իրանց մէջ էր դնում, այն-պէս որ նրանց մարմիններն երբէք իրար չը կպան:

Շահ-իսմայիլը Փէրիին բաղդին հասցնելու ծրագրով տողորւած մտածում էր:

Մի օր Շահ-իսմայիլը սրտի խորքից մի բոցակէզ հա-ռաչ արձակեց, դէմքը մոայլեցաւ և տիրութիւնը տի-րեց նրա աչքերուն: Այս պարագան Փէրիին խսկոյն նկա-տելով ասաց:

— Իշման, ինչ պակասութիւն, ինչ բաղձանք, ինչ ցանկութիւն ունիս չըկատարւած, որ վշտաբէկ սրտով հառաչում ես:

— Ճշմարիտ է, հոգիս, մեզ ոչինչ չի պակասում, քեզ նման քնքոյշ սիրտը մօտս ունենալուց յետոյ, էլ ինձ ինչ պիտի պակասի, բայց...

— Բայց: հարցրեց Փէրին վառող աչքերը Գանձա-ռանզի դէմքին յառած:

— Հոգիս տանջում է, խոռվում է ինձ, իիդու էլ հա-լածում...

— Ի՞նչու, ասաց Փէրին արդէն արտասւակալած աչ-քերով:

— Ես էլ քեզ նման, մի Վարդիթերից բաժանւել եմ, մինչև նրան չը գտնեմ, ես ոչ ոքի սիրտը չեմ կարող դրաւել և վշտին սպեղանի դնել: Նրա կարօտն այնպէս է

թոքերս այլում քրքրում, որ խաղաղութիւնս իսպառ կտրւել է: Ինձ պատմեցին, թէ ցեղապետ իդուն իր հոռվիճերով և խաշներով այս կողմերն է եկել վրան խրփել: Ասաց հոգիս, ինձնից մի ծածկիլ Գիւլիզարիս այս կողմերը խռ չես տեսել նրա տալլով խռ չես իմացել: Ասաց, թէ տեղոր գիտես, սամ, գնամ նրան վեր առնեմք քու ուրդ էլ դամեմ և բոլորս միասին վերապառնամք Թողմանդար, որակեզ հայրս, դահս ու գտազանս ձեզ է սպասում: Խո յաւիսեան ես բեռ չը պիտի մնամ եղբայրներիդ ուսին: Պէտք է վերապառնայ ամեն մարդ իր գործին ու պաշտօնին: Ահա, հոգիս, թէ ինչի համար խռոված է սիրաս և խիզմ երազներում անգամ ինձ հալածում է: Ահա թէ ինչի շատ անդամ լալիս եմ նոյնիսկ քնի մէջ և խորվում քու էլ խաղաղութիւնը:

Աչ իշխանս, ես այդպիսի մի գեղանիի մասին կետնբումս բան չէի լսած:

Երբ Գահժառանզը պատրաստութիւն էր տեսնում, որ գնայ որոնէ իր Գիւլիզարին, Փերին գնաց եղբայրների մօտ և տաց.

— Ասոցին եղբայրներ, ես ինչ կրակը դուք ինձ գլուրեցիք: Փեսանիրդ պատրաստում է զնալ և ինձ այսակը թողնել:

Իսկոյն եղբայրները ներկայացան Շահ-Խամայիլին և առացին:

— Իշխան, ուր եք մտազիր զնալու:

— Ազանիր, ասաց Գահժառանզը, ես մի կորուստ ունիմ, որի պատճառով էլ այս կողմերն եկայ: Իմ գանձիս չանձիթից գողցան, փախցրին Մուղան, որոնց հետեւլով ձեր պալատը հասայ, ձեր հիւրասիրութեան ու անզին բարեկամութեանն արժոնացայ: Բայց այնպէս է ինձ մաշում, սրտիս ջղերն կտրատում այդ կորուստս, սիրականս և իր վհուկ մօրը ձեռքից քաշած նրա տանջանքնե-

րը, որ ես խաղաղութիւն չեմ գտնել մինչև սիրեկանիս չազատեմ այդ կախարդի գտներ ճիրաններից: Թէ Գիւլիզարիս չը գտնեմ, ինքս էլ կը ոչնչանամ, երբ գտայ, կը վերադառնամ ձեզ մօտ, Գիւլ-Փէրիս կը վերցնեմ ու կը վերադառնամ արքունիքս:

— Բարով համնիք ձեր մուրազին, ասացին եղբայրները: Բայց, իշխան, այն ճանապարհը, որտեղից պիտի անցնիք Ճորա-պահակ համնելու համար, կտրել է մի Արար իւզբէկ, որը ոչ ոքի չի թողնում ողջամբ իր սահմանից անցնելու: Զգուշացէք և զգաստ կատարեցէք ձեր ճանապարհորդութիւնը:

VI. ԲԱԽՏԱԿԻՑՆԵՐ

Այս ժամանակ եղբայրների հետ պայման դրեց Գահժառանզը, համբուրեց Գիւլ-Փէրին, քառասուն օրից վերապառնալու խոստում տեսց ու ճանապարհ ընկաւ Գիւլ-Փէրին մի կերպ հասկացրեց իշխանին, թէ այդ Արարն է իր սիրալ գրաւել:

Շատ գնաց, թէ քիչ գնաց, պատմողներին անյայտ մնաց. մի առաւօտ վաղ հեռուն մի բարձրակառոյց պալատ նկատեց Գահժառանզը: Քիչ մօտենալուց յետոյ, տեսաւ, որ այդ պալատը Գիւլ-Փէրիի ապարանքից աւելի գեղեցիկ էր: Ապա նկատեց, որ պալատի առաջ մի մեծ և գոյնզգոյն կտորներից կարւած տաղաւար է զարկւած, որի աջ ու ձախ կողմը բիւրաւոր զօրք է կանգնած: Գահժառանզը նստած Գամէր նժոյգին կամաց առաջանալով հասաւ վրաններին, բայց այնքան վաղ էր, որ ոչ ոք նըրան չէր էլ նկատել: Զին կապեց մի վրանի զրան առաջ, ներս մտաւ, տեսաւ, որ մի սումբը է բացած, վրան մի լանգարի սարփոշի տակ վլաւ է դրած, երկու գդալ և եր-

Կու էլ հաց։ Մարփոշը բացեց տեսաւ վլաւը, որի վրան
քաշւած կերասի քաղցրաւենին արիւնից էլ կսս-կարմիր
էր։ Գահժառանգը աներկիւղ վերցրեց զգալը սկսեց ու-
տել վլաւը։ Մինչ քաղցած ճամբորդը փորն էր կշաց-
նում, հեռուից Արաք Խւզբէկը գոռալով ասաց։

— Կտրիճ, դրան «աղինոտ» վլաւ են ասում, առաջ
ինձ հետ մրցիր և ապա ստամոքսդ բեռնաւորիր։

Այս որ լցեց Գահժառանգը տաւիղը ձեռքն արաւ,
նրան պատասխանեց նւագով ու երգով գուստնի նման։

Խոլամանդարից Եկայ մուրագիս համար,
Հոգիդ սիրես, արաք, նեղութիւն մի տալ.
Թհյլ տուր անցնեմ, երթամ, կտրեմ ճանապարհ,
Աման արաք, անցիր, նեղութիւն մի տալ։

Ար աւ թը իսկոյն պատասխանեց առանց նւագարանի։

Վիրաւոր թևերով առտուն մի կաքաւ
Չըկցցաւ թռչիլ, ուռկանս ընկաւ,
Վախից շուրթը եօթը տեղից ճաքեցաւ,
Աչքերից արտասունքն հոսում է, թափւում։

Շահ-իսմայիլ

Հոգիս Արաք, իմ ետեից մի ընկնիլ
Ոչ մի բագէ չանչը գէշիս չէ մղել,
Թէ հարկ լինի փորձով այդ էլ կլտեսնես,
Աման Արաք, անցիր, նեղութիւն մի տալ։

Ար աւ թ

Սպասում եմ որսի բարձունքիս թառած,
Դիմագրող թշնամուս կրակում վառած,
Քուրի չափով արիւն եմ հոսեցրած,
Գետերն եմ յորդել ու դաշտերն եմ ծածկել։

Շահ-իսմայիլ

Թէ փորձես վրա գալ, բաժդ կստանաս,
Քեզ կսպանեմ, Արաք, շունիս ուրիշ ճտր.
Կըքանդեմ, կըթափեմ պլիղդ թագ, պալատ,
Գերիդ դառնամ, Արաք, նեղութիւն մի տալ.

Ար աւ թ

Շատերից եմ կողոպտել անհաշիւ կապոց,
Չըսեսամը Գանկերից շինւած մեծ ամրոցն,
Շատերը քեզ նման միշտ վախան լացով,
Այստեղ գալողն պիտի բաժ տայ ու երթայ։

Շահ-իսմայիլ

Մի բորբոքիլ, կըվերցնեմ սուր, վահան,
Թէ Գամերիս թիկունքին էլ բարձրանամ,
Այս ժամանակ դիմիր վերին օգնութեան,
Էլ չեմ լսել, խնայիր աղերս ու պայման։

Ար աւ թ

Դեռ մանուկ ես, ասպարիզում անկշիռ,
Վախից դէմքիդ գոյնն է վախել, անկշիռ,
Միթէ չէր լսել համբաւն Խւզբէզի,
Այստեղ գալողն պիտի բաժ տայ ու մեկնի։

Թուղթերէն

Խօլմանդարդան գեալզըմ մուրադ ալմաղա,
Աման Արաք գեալ ինջիթմէ բէնի.
Կօյ վէր ըի գիգէյիմ քէնդի եօլումա,
Աման Արաք, աման ինջիթմէ բէնի։

Սահրադան ըիր ըեաքլիք գիւշդի տուզաղա.
Ավընը շաշրմը դիւշիւնուր գիդար,
Ղորիսուսընդան տօդախլարի չաթլամիշ,
Աղլաշը գէօղիւնդէն եաշ ախըք գիդար։


Զանըմ, Արա՛ր, գիւշմա բէնըմ փէշըմա,
Դէյմէ շահին փէնչա վուրմաղ լէշըմա,
Շիմդի նաշար էյլա թէզ սավաշը մա,
Աման Արա՛ր, գեա՛ր, ինջիթմէ բէնի:

Չըքըր եռւքսաքլարդան ավա բաքարըմ,
Գեալան դուշմանլարը վուրուր, եազարըմ,
Թունա սէլի քեպի ղանլար սաշարըմ,
Ախան չայլար ջօշի վերիրդա գիդար:
Նէյլէրսըն գեալանդա, ալրսըն բաջը,
Էօլդիւրիւրըմ, Արար, եօխդըր իլլաջը,
Երխարըմ բաշընա Սարայի, թաջը,
Քէօլան օլիմ, Արար, ինջիթմա բէնի:

Չողունդան ալմշամ բունջա շեքեարի,
Գէօրմէշմիսան քեալլադան բունջա հիսարի,
Չոխլարի սէն քիրի տղլաթտըմ զարի,
Բուրայա գեալան բաճ վէրիր գիդար:
Հազարան զալիսնը ալամ էլլըմա,
Չաղըրըրըմ խզրը, քրքլարը բիլա,
Մէվլամ խմդադ էյլա Շահ-իսմայիլա,
Մէվլանըն աշզընա էօլդիւրմա բէնի:
Չօջուքսըն մէյդանըն դէլիլսըն դէնդի,
Ղորխուսընդան զաշմիշ խզունուն բէնդի:
Հէջ սէն տույմադըն մի արար խզրէզին,
Բուրայա գեալան բիլա բաճ վէրիր, գիդար:

Երգերը փոխանակելուց յետոյ, Գահժառանդը գլուխը
կերակրից բարձրացրեց տեսաւ Արարի դէմքը, որի մի
շրթունքը գետին էր քսւում, միւս կովկասի բարձրուն-
քին: Ազա դառնալով Արաբին տաաց.

Անձիշտական շահուն բարձրացրեց եօթն անձաւ դարձեց...



— Ի՞նչ ես գորզուռում բարձունքում կանգնած անձը ի ամպի նման, ցած իջիր, տղամարդու նման գիմաց անցիր, կպչենք, կամ դու կընկնես, կամ ես:

Այս որ լսեց Արար իւզբէգը սաստիկ զայրացաւ, ցած եկաւ, դուրս քաշեց, Աև նժոյզը, հեծաւ, ձեռքն առաւ եօթանասուն լորանոց լախտը իջաւ տապարէզ: Գահժառանգն առանց վայրկեան կորցնելու թռաւ աշտանակեց Գամէր նժոյզը և Արարին դիմաւորեց: Արարը զննեց կտրիճին և յոխորտաց.

— Տղայ, յարձակւիր:

— Ո՛չ, ասաց Գահժառանգը, ես մտայ քո սահմանը, այժմ յարձակման հերթը քոնն է:

Արար իւզբէգը աեսաւ, որ հակառակորդը փորձառու մէկն է: Թէև այս միտքը նրան յուզեց, բայց ինքն իրեն քաջալերեց մտածելով, որ ինքը այդ դեռահաս մանուկին մի յարձակումով կարող է կաշկանդել: Անմիջապէս լախտը բարձրացրեց, օդի մէջ եօթն անգամ դարձեց և երբ ուզում էր խփել հակառակորդին, Գահժառանգի լախտը զարկւեց և այս ընդհարումից այնպիսի կայծեր ու բոցեր ցայտեցան, որ երկուսն էլ ծխի, փոշու մէջ կորան: Մանաւանդ նժոյզների ուսքերի զոփիւններից այնպիսի փոշի բարձրացաւ, որ աչք աչքի չէր տեսնում: Արարի հարւածն այնքան հուժկու էր, որ Գահժառանգն իր ձիով ընկրկեցաւ: Թէև սրանց ոչ մի վլաս չըհասաւ, բայց իշխանի ծծած կաթը քթից բերնից դուրս ժայթքեց: Արարը իր հարւածի խառութիւնը զիտնալով ինքն իրեն մտածեց: — Ավտոն, մանուկին մեղքս եկաւ, ասաց ու ետ դարձաւ հրապարակի միւս ծայրը: Գահժառանգը ուժերը կեզրոնացնելով շուրջը ուշադրութեամբ զննեց, սրտի խորքից այնպիսի ահոելի մի ծայն արձակեց որ սար ու ձոր արձագանքով գորգուաց: Արարն այս ծայնը լսելիս երկիւղից շրթունքները ճաքեցան, մտածեց

վախչել: Ալս որ տեսաւ դեռահաս իշխանը, գոռաց:

— Ո՞ւր ես փախչում, սկերես, հասցըածիդ փոխարէնը եթէ քեզ չըվերադաբնեմ, մօրս կաթն ինձ հարամ կը լինի: Պատրաստւիր, ահա եկայ:

Ասաց ու վրայ տեսց և արարի հետ լախտ լախտի, սուր սրի, վահան վահանի ընդդիմահարած այնպէս զարկւեցան, իշխանի լախտը այնպիսի ուժով հարւածեց, որ Արարի ու ձին անգամ ցնցւեցաւ, գլորւեցաւ, Արարը ձիուց վայր ընկաւ, շւարեց մնաց: Խոկոյն Շահ-իսմայլը ձիուց վար իջաւ, Արարի կըծքին նստաւ, գոտուց դաշոյնը դուրս զաշեց, պիտի մխէր հակառակորդի կուրծքը, յանկարծ Արարը երեսի դիմակը վերցրեց:

Գահժառանգը ապուշ կորած տեսաւ, որ Արար կարծածը մի գեռհաս գեղեցիկ պատանի է, որի լրիւ լուսնաման փայլուն դէմքը դիւթեցին նրա աչքերը: Էլ ոչ միտյն չըկարողացաւ խօսքն ու կոփւր շարունակել, այլ արձանացաւ, ուշը կորցրած ընկաւ հերոս իշխանը: Այդ դիմակն ու ծպտած շորերը մի կողմը թափեց, գոտաց իր աղախիներին.

— Աղջիկներ, շուտ ջուր հասցըէք, սառուց բերէք, ես գաայ իմ սրոնած տէրս ու իշխանս, բարեկամս ու հովանաւորս:

Խոկոյն ջուր ու սառուց հասցըին, Գահժառանգին սթափիեցըին, Արարը իր նաժիշտներով նրա թևերի տակ մտան, կամաց կտմաց տարան պալատ, սանդուխներից բարձրացըին, մի զարդարուն սրան մացրին և թաւիշով ու օթոցներով զարդարւած թափսի վրայ պառկացըին: Արարն այնպիսի խնամք տարաւ, այնպիսի յարգանքով վարւեց, պատւեց այնպիսի ճոխ սեղաններով ընտիր նեկտարներով հիւրասիրեց, որ Գահժառանգը մինչև այդ օրը տեսածները մոռացաւ և շատ սիրալիր խօսակցութիւններով մի շաբաթ մնաց այդտեղ:

Այդաեղ Արաբը պատմեց իր սէր Գիւլ-Փէրիի հետ և Գահժառանգը իր դաշինքը սիրատոչոր կոյսի հետ, որին խոստացել էր մուրազին հասցնել, էլ այնպիսի բարեկամական կապերով կապւեցան Գահժառանգն ու Արաբը իրար հետ, որ երեսուն լուծ Գոմէշ նրանց չէր կարող բաժանել:

Մի օր Գահժառանգը դարձեալ սրտի խորքից մի այնպիսի կեզիչ հառաչ արձակեց, ախ քաշեց, Ֆալաքի հայելին այնպէս մուայեց ու սևացրեց, որ Արաբը հոգւով տիրութեամբ լցւած, ասաց.

— Տէրս, ինչի ես հառաչում, ինչ վիշտ ունիս, ասա, որ իմանամ:

— Ինձ այս երկիրն առաջնորդեց հոգիս մաշող անըոյժ վիշտս: Այնքան ծանր է այս մորմոքս, որ եթէ կովկասի սարերին բառնամ, նրանք չեն դիմանալ, կը փշուին և երկիրը կը տափակի: Ես մի զրյգ չնաշխարհիկ շողակին եմ բաժանւել, որոնք եթէ չը գտնեմ, ոչ ոքի սրտին դեղ ու դարման չեմ կարող դառնալ:

— Իշխանս, ասաց Արաբը յուզւած, խաղաղութիւնը կորցրած, ուու ինձ տեղակին պատմիր վիշտդ, ես քու ցափդ սպեղանին կը դառնամ:

— Իշխան, ասաց դարձեալ հառաչելով Գահժառանգը, ես սիրահարւած էի հովիւների ցեղապետ իդունի աղջկայ՝ Վարդիթերի վրայ: Վճուկ մայրը չուզեց մեր բախտաւորութիւնը, փախցրեց աղջկան այս կողմերը: Նրա պատճառով ես սարէսար ընկած թափառելիս, ակամայ քեզ հետ ընդհարւեցայ, չիւրդ դարձայ: Եթէ իմ Վարդիթերից տեղեկութիւն ունիս, ասա, գնամ նրան հասնեմ, քանի

սիրառ ու թոքերս սիրոյ կրակով իսպառ չեն խանձւել: — Իշխանս, ասաց Արաբը, միասին գնանք, գնառենք ու գտնենք. ես կեանքս քեզ համար զոհել եմ արդէն, քանի որ ինքս էլ չեմ հասնում իմ սիրածին:

Ասացին ու ճամապարհ ընկան, Ճորտ-Պահակն անցան, մտան Սարմատական աշխարհը: Շատ գնացին, քիչ գնացին, այդ ոչ չգիտէ, վերջապէս հասան մեծ օբան ուր հազարաւոր հովւական գոյնզգոյն վրաններ էին բարձրացրած և բիւրաւոր խաշներ ու կովեր էին արածում: Այդաեղ մի պատառուտած սկ վրան մտան, մի կնոջ մօտ և խնդրեցին, որ մի գիշեր իրենց հիւր ընդունէ: — Բարի, ասաց պառաւը, բայց ես ձեր նժոյգների համար տեղ չունեմ:

Այդ ժամանակ Գահժառանգը ձեռքը կոխեց գրպանը և մի բուռը ոսկի զարդեր լցրեց պառաւի գոզնոցը: Այս փայլուն մետաղը պառաւին այնքան ուրախացրեց, որ նա ասաց.

— Խրամատում մի գետնափոր կաթնատուն ունեմ, քաշեցէք ձիերդ ու այնտեղ կապեցէք, ինքներդ էլ հանգստացէք: Զեզ համար խսկոյն ձւազեղ կը պատրաստեմ:

Այդ օրը մինչև իրիկուն այդ գետնափոր ախոռում հիւր մնացին իշխան ճանապարհորդները, որտեղ պառաւը նրանց լաւ ընթրիքով հիւրասիրեց: Ընթրիքը յետոյ, երբ ճանապարհորդները պատրաստում էին քնելու, կազդուրւելու, յանկարծ ականջներին սրնդի, տաւդի, թմբուկի ու քարի ձայն հասաւ և ուշագրութիւնները գրաւեց:

— Նանա, ասաց Գահժառանգը պառաւին, այս ինչ նւագարանի ու երդի ձայներ են գալիս, ինչ է պատահել ձեր օբայում:

— Զաւակս, ասաց պառաւը ժապալով և հիւրերից մի բան ևս կորզելու ցանկութիւնով, մեր թափաւորի որդին սիրահարւել էր իդուն ցեղապետի միակ աղջկան, որոնք

նոր են եկել մեր կողմերը հարաւից։ Անման գեղեցիկ աղջիկը այնպէս է յափշտակել մեր թագաժառանգին, որ գիշեր-ցերեկ հանգիստն է կորել։ Վերջապէս իդուն և կինը խօսք տվին թագաւորին, բայց աղջիկը քառասուն օր սուգ պահելու ժամանակ առաւ։ Իդունի աղջկայ սիրուց այնպէս է գժւել թագաւորի որդին, որ չը խելագացւելու համար ամեն իրիկուն գուսաններ է հաւաքում, որոնք երգում են, պարում և նրան զբաղեցնում։ Այսօր այդ սգի պահմանաժամի տասնեհինգերորդ գիշերն է և օբայի ջահէները շրջապատած թագաւորի որդուն զւարձացնում են։

Այս որ լսեց Գահժառանգը յուզեցաւ, արիւնը գըլիխն խփեց, կարմրեցաւ և նայեց Արաբի աշքերին։ Արաբը հասկացաւ ամեն բան և զգուշութեամբ ասաց։

— Հանգստացիր, համբերիր այս գիշել, մինչև որ մեր անելիքը խոնեմութեամբ ծրագըենք։

Այդ գիշերն ամբողջապէս խորհեցան ու ծրագրեցին։ Առաւօտեան Արաբը խուրջինից մի ձեռքնոր շոր հագցրեց պառաւին մի բուռ մարդարիս նւեր տւեց, ապա Գիւլիզարի սիրահարին տւած զոհարազարդ ոսկեստնը տւեց նրա ձեռքն ու ասաց։

Նահնա, մի հնարով Գիւլիզարի վրանը մտիր, այս սանը նրան ցոյց տուր և նորանից լսածդ պատասխանը խսկոյն եկ, մեզ պատմիր։

Պառաւը ուղղակի գիմեց ցեղաղետի վրանը, ներս մտաւ, իշխանութեան հինայի թաս յանձնելու պատրւկով։ Երբ Գիւլիզարը տեսաւ թուր պառաւի ձեռքին, զայրացած ասաց։

— Թաւթառ, այդ հինայի թասը վար զցէ, թէ չէ քեզ ոտքերիս տակ կը գլորեմ, քառսուն կտոր կը շինեմ։ Պառաւն իսկոյն կրծկալի տակից զգուշութեամբ ոսկի սանը ձայրը ցոյց տւեց և խորհրդաւոր հայեացք զցեց



Գիւլիւզարի վրայ, հինույի թասը ձեռքից գետին գլորելով: Երբ Գիւլիզարը սանրը նկատեց, ճարպկութեամբ շրջապառող աղջիկներն դուրս ուղարկեց և պառաւին իր խորանը տանելով ասաց.

—Եկ ներս, նանա, եկ ինձ մօտ, վաղուց է քեզ չեմ տեսել:

Երբ առանձնացան, սանրը վերցրեց, քննեց, ապա ցած ձայնով նորից հարցրեց.

—Այս սանրը քեզ ով տւեց նանա:

—Աղջիկս, ասաց պառաւը չորս կողմը զննելով, քո սիրահար Գահժառանդը այժմ իմ վրանումս է, քեզնից լուր և սպատասխանի է սպասում:

—Նանա ջմն, ասաց Գիւլիզարը փաղաքշելով պառաւին, իմ անդին նանա, ես այժմ գետափի վարդաստանում պիտի դնամ զբօննելու: Ասա նրան, որ գայ, այնաեղ տեսնւենք:

Պառաւն իսկոյն վերադարձաւ և Գիւլիզարի պառաւսխանը նրան հասցրեց: Պառաւի բերած լուրից անչափ բաւական, նրան նորից նուէրներ տւին:

Իրիկնադէմ ձիերը դուրս քաշեցին, մեր քաջերը, հեծան ու դիմեցին վարդաստան: Երբ երկու սիրահար իրար գիմաւորեցին, իսկոյն գրկւեցան, փարուեցին իրար վզին.

—Տէրս, ես քեզ երկնքումն էի փնտում, պարտիզում գտայ, առաց ողբագին Գիւլիզարն և ոգեսրւած ու դիւթւած երկար ժամանակ իրար հետ խօսակցեցան. Երբ սրտի զգացումները իրար հազորդեցին, դառը մըտքերը յուղեցին ու մըրկեցին Գահժառանդի սիրաը, նա վերցրեց տաւիլը նւագեց, ու ասաց.

Ես կարծեցի, նոր հարս դարձած զալիս ես,
Ալ ու կարմիր հապած, կապած լալիս ես,

Եարիդ բաղջայից ես քաղել կարմիր վարդ, Սիրուդ դիմաց դուրս ես զալիս ձեռիդ վարդ: Գիւլիզար

Անջատումից մինչ օրս ես չեմ խնդացել, Հոգիս քեզ մօտ թողած, անսիրու մնացել Դու իմ սիրտս օտարին խօ չե՞ս բաժնել Վշտիս դարման, եար ջան, հրճւանքով եկար:

Շահ-Խամայիլ

Բաւական է, տրտունջներդ բաւական, Ծակծկւել է թոքերս ամբողջ, սիրտ ու լեարդ, Կարծում էի, երգում են թութակ, ծիծառ, Սիրեկանս քաղցր լեզով դէմս եկաւ:

Գիւլիզար

Թհող աւերեն բաղչաս, Էլ ինչիս է պէտք, Թհող թափւի սերկնիլն, նուռն ինչիս է պէտք, Քեզնից զատ սիրահարն իմ ինչիս է պէտք, Դարդիս դարման, եան ջան, ժպտալով եկար:

Շահ-Խամայիլ

Գահժառանդը գնաց, մտաւ վարդաստան, Աչքից թափւեց արցունք, լցրեց աւազանն, Նախանձորդներ տարելք թշնամուն իսքար, Թագուհու պէս փունջը ձեռիդ շորորա:

Գիւլիզար

Ժպտով եկար, բարնվ, կեանքիս կենսատուն, Սիրուդ համար շատ մնացի ես տրտում, Մատաղ լինեմ սրտիդ համար վարդիթերն, Ցաւիս դարման, եար ջան, հրճւանքով եկար:

Թուրքերէն

Թէնդա բիլդը թագա վեալին օլմըշըն, Գէյինմիշ, դուշանմիշ ալ իլէ գեալըր,

Գիրմիշ եար բաղչասրնա դէլմիշ, դէօվիւլմիշ.
Դութընա բէրգիւղար վէրմէյէ գիւլիլէ գեալըր:

Սէնդան այրըլարը բիր դէմ գիւլմաղըմ,
Նշանըմ սէնդա դըր, եար, սէֆա գեալդըն,
Սէն մէյլիմի քիմսալարա վէրմաղըն,
Դարդըմըն դէրմանիր, եար, սէֆա գեալդըն:

Եթար օլդու բու սիթամլար, եթիշիր,
Գէօզ, գէօզ օլդու զարա բաղրմ թութուշուր.
Բէն սանըրդըմ թութու, զումրու էօթիւշուր,
Սէփիկիմ, բանա շիրին դիլ իլէ գեալ:

Երխըլարն բաղալար զայրի նէյլիյիմ,
Թէօքիւլսըն այվալար, նարի նէյլիյիմ:
Սէնդան էօգգեա զայրի եարի նէյլիյիմ,
Դարդլարա դէրմանսըն եար սէֆա գեալդըն:

Շահ-իսմայիլ գեալդի, դիրթի գիւլշանա,
Ազտը չէշմիմ եացը, դէօնդի իւմմանա,
Ազուլարըն խաբէր վիրի դիւշմանա,
Փաղիշահ զըր աղը էլ իլէ գեալըր:

Սէֆա գեալդին, սէֆա, էօմրումըն վարի,
Ուղուբընա չէքեարըմ ահիլէ զարի,
Սանա զուբրան օլառն բու Գիւլլիզարի,
Դէրգիմին դէրմանը եար սէֆա գեալդըն:

Երբ երգով ու նւտղով զբաղւած էին Արաբ-Իւզբէզը
ողկորւեց, Գիւլիզարին ճանկերի մէջն առաւ, ձին մըտ-
րակեց ու ճանապարհ ընկաւ, որին հետեւց Գահժառան-
զը: Նժոյգները սլանում ու թռչում էին պեղասի նման,
որոնց չէին կարող համեմել նոյնիսկ երկնային կառքերը:
Ճանապարհին մի աղբիւր տեսան: Քիչ հանգստանանք և

խօսակցենք, ասելով ձիերից իջան: Երբ խօսքն ու դրոյցն
երկարեց և սիրահարները յոգնեցան, Արաբն առաց,

— Իշխան, դուք քանի օր է, որ կարգին քնած չէք,
իշխանուհու աջքերն էլ ծանրացել են: Քիչ տարածւեցէք,
քնեցէք. որ ուժերդ վերանորոգեն ճանապարհը շարունա-
կելու համար, ևս ձեզ կը ծածկեմ և պահոպան կը կան-
գնեմ մինչև զարթիք:

Այսքան յոգնած էին, որ էլ չը մերժեցին Արաբի
խորհուրդը, այլ իսկոյն քուն եղան: Շատ քնեցան, թէ
քիչ, Արաբը չը կարողացաւ չափել բայց յանկարծ նը-
կատեց, որ իրենց եկած ճանապարհին մի մութ փոշու
ամպ է բարձրացել, որը հետզհետէ մեծանում և իրենց է
մօտենում: Քիչ զննելուց յետոյ, Արաբը երբ նկատեց,
թէ մի մեծ բանակ է զալիս, իսկոյն պատրաստութիւն
տեսաւ: Մօտեցաւ ամողներին, որ ձայն տայ, աեսաւ որ
նրանք անուշքնած են, խնայեց նրանց, էլ չը զարթեցրեց,
այլ եա դարձաւ, նատաւ ոև ձին, եօթանտուն լաբանոց
լախար վերցրեց, թշնամու զօրքին դիմաւորեց: Իր սովո-
րութեան համաձայն մի այնպիսը աղաղակ բարձրացրեց,
որ թշնամին կարծեց, թէ երկինքն որոտաց: Ինչպէս սո-
ված գայլը ոչխարի հօտում, այնպէս էլ Արաբը մտաւ
թշնամու բանակը, շարժեց լախար. ցնցեց ու հասցրեց
աջ ու ձախ, ոմանց կոտորեց ոմանց փախցրեց, մի ժամի
մէջ ցըւեց ողջ բանակն ու յաղթանակով վերաղարձաւ:
Նորահաններին մօտեցաւ, տեսաւ որ զիռ քնած են: Դար-
ձեալ ինայեց սրանց, չը զարթեցրեց և քնարը ձեռքն առ-
նելով սիրահարների համար նւազեց ու երդեց.

Նորից մշուշ իջաւ Սարմատական զաշտն.
Զարթիր, հէյ նազելիս, տես արիւնն ու լաշն.
Զորս կողմս խաւարեց դժոխվի նման,
Զարթիր, հէյ նազելիս տես արիւնն ու լաշն:

Այժմ լուր հասցրին Սարմատի զահին,
 Նրանք խիստ ծառաւի են մի բուռ արիւնին,
 Աղւեսն ինչ կարող է անել առիւծին,
 Զարթիր հէյ նաղենիս, տես արիւնն ու լաշն:
 Թաթար գնաց, հասաւ, զղղղաց օբան,
 Յանկալի չէ կուեր, մարդիկն են խոպան.
 Եթէ ոչ դիակով կը լցւի խրամն,
 Զարթիր, հէյ նաղելիս, տես արիւնն ու լաշն:
 Լուր տարին հասցրին Շօրայի շահին,
 Նա կոխւ դուռս կը դայ, մեզ չի զիջանիլ,
 Որքան արիւն թափեց արարն ակամայ,
 Զարթիր, հէյ նաղելիս, տես արիւնն ու լաշն:

Թուրքերէն

Գինէ դուման չէօդի Սարմատ եօլունա,
 Ուեան, հէյ սավդիպիմ, գէօր նէլար օլդի,
 Դէօրդ եանըմըզ վէօնդի զարա զումանա,
 Ուեան, հէյ սավդիպիմ, գէօր նէլար օլդի:
 Շիմդի խաբար գիդար Սարմատ Շահրնա,
 Օնլարդա սուսանմըզ բիլ ավուջ զանա,
 Թիլքի նէյլասըն բիլ աջ սալանա,
 Ուեան, հէյ սավդիպիմ, գէօր նէլար օլդի:
 Շիմդի մէնդիլ պիթդի, գեալլր հաբաշի,
 Բէնդա օնլար իլա էթմամ սավաշի,
 Դէրէլար գոլդըրըմ զան իլա լէշի,
 Ուեան, հէյ սավդիպիմ, գէօր նէլար օլդի:
 Շիմդի խաբար գիդար գեալլր Շօրախա:
 Օնլարդա գեալլըրար բիզիմլա շէանգա,
 Գէօր նէլար իլլադի արաբ իւզբէդի,
 Ուեան, հէյ սավդիպիմ, գէօր նէլար օլդի:
 Արաբի երգի ու նւագի ձայնից զարթեց Գահժառան-
 քը, գլուխը բարձրացրեց ու ասաց.

— Ամման Արաբ, սոված եմ պատիկ, մի քիչ բան
 բեր նախաճաշենք մա Վրայ զանալոյ զայ ու ծածախան
 վեր կացէք, գնանք: Այսեղ մօտ դաշտում հինգ-
 տասը կաքաւ զարկի, թողի: Գնանք խորովենք, քմծիծա-
 դիվ ասաց Արաբը ու Գահժառանդին տարաւ, ցոյց տւեց
 իր սիրագործութիւնները: Իշխանը սոսկաց, երբ նկատեց
 անմեղների դիակները, որոնք զոնաէին գնացել իրենց
 բոնաւոր իշխանի որդու քմճաճոյքներին և կոտորել ըն-
 կեր էին կուի գաշտում: Սարսափեց Գահժառանդը աչքե-
 րը փակած ետ դարձաւ, իսկոյն ձիերին նստան, ճանա-
 պարհ ընկան, հասան Արաբի պալատը: Այսեղ մի քանի
 օր հանգստանալուց յետոյ, ինչ որ Արաբն ունէր թեթև
 քաշով թանկագին ապրանք կապկալեցին, վերցրին, ճանա-
 պարհ ընկան, հասան Գիւլ-Փէրիի ապարանքը ուր և
 իշմանեցան: Գիւլ-Փէրին երբ տեսաւ սիրահարին, գնաց,
 փաթաթւեց, կարօտն առաւ: Ապա եկաւ նստեց Գիւլ-
 գարի մօտ վշտակցեցաւ: Իշխանութու հինգ եղբայրները
 մեծամեծ պատրաստութիւններ տեսան, երեք օր կերան,
 խմեցին ու զւարձացան.

Երեք օրից յետոյ Գահժառանդը պատւիրեց պատ-
 րաստութիւն տեսնել ճանապարհ ընկնելու դէպի Խոլման-
 դար: Փէրին եղբայրներին թախանձեց, որ նրանք էլ իրեն
 հետ գնան: Բայց եղբայրներն ասացին.

— Երեք, քոյրիկ, մենք չենք կարոք մեր հայրական
 տուն ու տեղը թողնել, հեռանալ, դուք գնացէք, ձեր մու-
 րազին հասէք: Ալա Շահ-իսմայիլին դիմելով աւելացրին:

— Բարով հասնիք դուք էլ ձեր հայրենիքին, տեսնէք
 ձեր սիրելիներին:

Նորից ճանապարհ ընկան Գահժառանդն ու Արաբը
 իրենց հետ վերցնելով Գիւլգարին ու Գիւլ-Փէրիին: Թէ
 քանի օրում Մուղանի զաշտից եփրատի ափերին հասան,
 կարող են գուշակել լսողները: Մի առաւօտ վաղ ճամբորդ-

ները իջան Ավոլմանդարից ոչ շատ հեռու մի աղբիւրի մօտ
նախաճաշելու։ Երբ իշխանը յաղթանակած, նպատա-
կին հասած հասաւ իրեն խիստ ծանօթ վայրը, սկսեց
չորս քոլորը գննել և վերանորոգել մանկական քաղցր յի-
շատակները, այդ ժամանակամիջ պարտիզանափունջը
ձեռքին մօտեցաւ Գահժառանդին, իսոնարի գլուխ տէց,
փունջը նւիրեց ու ասաց, զանց ցումայից զդարձնեմ
— Բարի ժամանեցիք, իշխան։ որդի մասից զրամակ
— Քաղցը գտանք, ասաց իշխանը պարտիզանին,
դնա թագաւոր հօրմանա, որ զօրք ու պատգարակուա-
դարկէ մեզ պալատ առաջնորդելու։ մասաւ մայման դո
Պարտիզանը վագէվազ հասաւ պալատ մասարիմ դո
— Աւետին, աւետիս, գոռալով և աչքերդ լոյս, կըր-
կնելով ներկայացաւ թագաւորին։ մասաւ մայման դրաբ
— Արքայ, Գահժառանդը վերադարձաւ, կաթնաղիւ-
րի մօաի է իջած իր նշանածի հետ, սպասում է պալա-
տական դիմաւորութեան։ մասաւ մայման դո
մայման դո գոյց մասաւ զնունդ նախարարութեան նմանան
VIII. ՀԱՅՐՈՒ ՈՒ ՈՐԴԻՆ

Իսկոյն նւէր տւին աւետաբեր պարտիզանին։ Ան-
միջապէս զինորական խումբը պալատական աւագ վերա-
տեսուչի հետ դիմաւորեցին Գահժառանդին։ Երբ վերա-
տեսուչը տեսաւ Գահժառանդի հետը բերած երկու լուս-
նատիպ Գեղանի օրիորդներին, իսկոյն վերադարձաւ և
իմաց տւաւ թագաւորին։ Մինչ պատգարակների վրայ
նստած մեծ թափորով քաղաք էին գնում օրիորդ-
ները, Արարը ուամ գցեց, վիճակի նայեց, տեսաւ, որ
պալատում իրենց կեանքին վտանգ է սպառնում։ Իսկոյն
Գահժառանդին մօտը կանչեց և ասաց.

— Իշխան, վիճակս վատ է ցոյց տալիս, մեզ թագա-
ւորի պալատը մի առաջնորդի, այլ տար մի ուրիշ ազգանք
— Շատ բարի, ասաց Գահժառանդը և հօրը լու-

դարկեց, որ իրենց համար պարտիզի փոքրիկ ապարանքի
դաները բանան։ Երբ քաղաք հասան, պալատական սպա-
սաւորները նրանց դիմաւորեցին, հիւրասիրեցին, պատւե-
ցին և նրանց յատկացւած փոքրիկ ապարանքն իջեցուցին։
— Երկու երեք օր յետոյ, թագուհին մի քանի նաժի-
շաներով հարսին այցի եկաւ, որ իմանայ թէ ինչպէս են
անցկացնում իրենց օրերը, Երբ նորան հեռւից տեսան
երկու նորատի կիներն, իսկոյն դիմաւորեցին, թերի
տակ մտան, սանդուխներից բարձրացրին, գահասրահը
բարձր թախտին փափուկ բարձերի վրայ նստեցրին և ի-
րանք ձեռքները կը քններին դրած, սպասեցին նրա հրա-
մանին։ Թագուհին սրանց գեղեցկութիւնից նախանձւած,
չը կարողացաւ նստած տեղը հանգստանալ։ Մինչև այդ
օրը թագուհին այդպիսի չքնաղ տիպար տեսած չունէր
և չէր հաւատում թէ դրանք հողածին մարդ են։ Նա կար-
ծում էր թէ ջրի փէրի են և գրաւել են իր որդու սիր-
ութը իսկոյն վեր կացաւ, վերադարձաւ պալատ։ Երբ գի-
շերը թագաւորը թագուհու առանձնարանը գնաց, կնայը
տառտիկ յուզւած տեսաւ։ Երբ թագաւոր հետամտեց պատ-
ճառն իմանալու, թագուհին ասաց։ մասաւ մայման դունան
— Անմիջապէս Շահ-Իսմայիլին գլխատել տուր և
հարսներին ձեռքիցն առ, բեր բո կանանց, ապա թէ ոչ
ես անձնասպան կը դասնամ։

— Ի՞նչ տարօրինակ առաջարկ ես անում, միթէ հայ-
րը կարող է զաւակին սպանել տալ, կամ զաւակի կինը,
որ փոխարինում է զաւակին, կարող է թիր կանանցը
մտցնել, սպաց զայրացած և կնոջ առանձնարանից դուրս
եկաւ, դարձաւ իր խորհրդարանը, սկսեց մտածել և խոր-
հել կնոջ անվայել առաջարկի մասին։ Ապա որոշեց գնալ
որդու մօտ և հարսներին տեսնել։
— Երբ հարսները թագաւորին տեսան, երկուսը միա-
սին նրան էլ դիմաւորեցին, անութիւների տակ մտան, սան-

դուիներից բարձրացրին, ապարանքի ծաղկուն սրահի գաճին բազմեցրին, իրենք էլ դիմացը կանգնեցին պատիտակ լուս ու մունջ, ձեռքերը կրծքներին դարսած թագաւորը զննեց թէ մէկին և թէ միւսին, ու դժբաղդաբար նա էլ սիրահարւեց երկուսի վրայ։ Ապա վերադաւ պարտ վէզիրին կանչեց, երբ վէզիրն եկաւ. առավել ասաց ասաց թագաւորը իսկոյն գնա, Գահիժառ սանդին գլխատի՛ր, կիներն առ ու պալատ դարձիր այլդ Տէր իմ, ասաց վէզիրը, Գահիժառանդը հեշտու թեամբ անձնատուը չի լինի, նրան ոչ մի ըմբիշ չի կարող կաշկանդել, նրա բազուկները կը փշեն բոլորին, անհրաժեշտ է մի դարան ծրագրել և ապա նրան կաշ կանդել։

— Այդ քո գործն է, ասաց թագաւորը և լիազօրութիւն տւեց վէզիրին, իսկառ զմառ առ առ առ վէզիրը մի մեծ հարկինք սարքեց արքունի վարդաստանի պարտիզում և որոշեց Գահիժառանդին տրւելիք կերակուրները թունաւորելով, թշառ երիտասարդին կեանչքից զրքել, Գահիժառանդը երբ պատրաստում էրահօրտած ճաշին ներկայանալու, Արաբը ռամ գցեցաւ զուշ շակելով պատրաստութիւնները, ասաց իր սիրելի ընկերը.

— Իշխան, վերցրու այս վէնզէնը կնիքը և քեզ բերած կերակուրները նախ սրամով կնքիր և ապա կեր: — Ենտ բարի, ասաց Գահիժառանդը, կնիքը վերցրեց և տղղակի գնաց վարդաստան:

Թագաւորը իր որդուն տեղ ցոյց տւեց, և նստեցրեց, և ամենքը նրան արժանաւոր յարդանքները յայտնեցին երց սկսեցին ճաշը, իշխանը նախ Արաբի տւած կնիքը թաթախում էր իր բաժին կերակուրներին և ապա ուրտում: Ճաշից յետոյ Գահիժառանդը վերադաւ իր քնակարանը և նախդիստ քնեց: այս դյունանիք է մասմ մին:

Երբ թագաւորը սրգու մահուան բօթը չը լսեց, կանչեց վէզիրին պսաց:

— Այս ծրագիրդ նպատակին չը ծառայեց:

— Տէր իմ, երբ նրան գերագոյն ուժերն են հովանաւորում, մենք ինչ կարող ենք անել:

— Նա կենդանի չպէտք է մնայ, նրա գոյութիւնը աշխարհից պիտի անհետացնեն, ասաց զայրացած թագաւոր հայրը կուրացած զազիր կը քերից: Վարդի աշխարհից պատի անհետացնեն, ասաց զայրացած թագաւոր հայրը կուրացած զազիր կը քերից:

— Տէր իմ, ասաց վէզիրը թագաւորին, գուք լաւ սաթիրանջ էք խաղում, կանչեցէք Շահ-Խսմայիլին, սկսեցէք սաթրանջ խաղալ: Եթէ տարւէք, նա չի համարձակւի ձեզնից բան պահանջելու, եթէ տարւի թևերը կապել կը տաք և ինչ մտադրութիւն ունիք, կիրագործէք:

Թագաւորը վէզիրի խորհրդին հաւանութիւն տեց և որդուն պալատ հրամանեց: Տարաբաղդաբար այդ օրը արաբը տկար, պարկած էր, չը կարողացաւ ռամ գցել և գուշակել թակարդները, առաջն առնել: Երբ զահաժառանդն հօրը ներկայացաւ, թագաւորն ասաց.

— Սիրտս սաստիկ նեղանում է, արի միասին մի սաթրանջ խաղանք, գուցէ ցրւես տիսուր մտքերս:

— Զեր հաճոյքը կատարելու միշտ պատրաստ եմ, ասաց գահաժառանդը: Երեք անգամ տարաւ, բայց երբ նրկատեց, որ թագաւոր ծերուկը տարւելիս ստատիկ զայրանում է, սիրտը ցաւեց և մի խաղ տարւեցաւ: Խսկոյն թագաւորն հրամայեց կապել գահաժառանդի թևերն թիւնքին, և ապա ասաց:

— Կտրտիր, որդիս, ջարդիր կապերիդ չւանեները,

Այս որ լսեց գահաժառանդը, ձգւեց, ոյժ գործ դլրեց և կապերի չւանեները ջարդեցան, թափեցան: Թագաւորը ներքնապէս սաստիկ բարկացած հարցրեց:

— Ապրիս, զաւակս, ինչով կարելի է քեզ կաշկանդել:

— Հայրիկ, ասաց գահաժառանդը, եթէ իմ աղեղիս

լարերով կապեն ետևս երկու բուդմատներս, աշխարհում
միայն ինձ դրանով կարող են կաշկանդել:

Թագաւորի հրամանով գնացին աղեղի վրայի լարը
քակեցին, բերին:

Երբ լարով կապեցին բդամատերը, գահաժառանգը բո-
լոր ոյժը գործ գրեց, մատները վիրաւորեց, բայց չը կա-
րողացաւ կապերը ջարդել: Անմիջապէս թագաւորը հը-
րամայեց՝ Գահաժառանգի ոտն ու ձեռքը նոյն լարերով
պինդ կապել և դահճին կանչել, որ գլխատէ. Երբ դահճ-
ները մօտեցան Շահ-Խսմայելին, թշւառ որդին աղերսով
նրանց ասաց.

Գթացէք ինձ, քիչ համբերեցէք, մի քտնի տող
երգ ասեմ հօրս, ապա նրա հրամանը գործադրեցէք:

Այնպիսի աղերսալի ձայնով, այնքան հաւատով ա-
սաց, թախանձեց, որ դիւթեց դահճներին: Ապա վերց-
րեց տաւիզը և նւագեց:

Դու ինձ մատաղ արա դռանդ շէմին,
Դանկով մորթել մի տալ ինձպէս անմեղին,
Ինձ ուղարկիր, տեսնեմ ըստիր ծնողին,
Էլ մի բոնանար, հայր, ինձ մի տալ մահին:
Երբէք մի լսիլ, հայր, կրքերիդ ձայնին,
Զէ որ զաւակն է հօր յաջորդ բաղձալին.
Երկու աչքն է զարդը մին մի կտրիճի,
Էլ մի բոնանար, հայր, ինձ մի տալ մահին:
Ամեն կողմս պատեց բոցեր կրակի,
Ու կարող է մահացնել իր զաւակին,
Մեղք եմ, հայրիկ, ինձ խնայիր, խնայիր,
Էլ մի բոնանար, հայր, ինձ մի տալ մահին:
Անգնոթ ֆալաքն ինձ մոլորեց, զլորեց,
Ողորմիր, հայր, ինձ մի զրկիլ լոյս օրից,
Պամատներս ճղճղեցան լարերից,

Էլ մի բոնանար, հայր, ինձ մի տալ մահին:
Հայր, մի դառնալ որդուդ դահիճ, անզգայ,
Կորցրել եմ պատիւ, նամուս, Էլ չկայ,
Վարդիթերիս քեզ կը տամ յօժարակամ,
Էլ մի բոնանար, հայր ինձ մի տալ մահին:
Շահ-Խսմայիլ քաշքում է նոր տանջանք,
Դու ես, հայրիկ, թէ զլսիս տէր և թէ թագ.
Միթէ պիտի վառես այգումդ աճած վարդ.
Էլ մի բոնանար, հայր, ինձ մի տալ մահին:
Թուղթերէն սալաթիճ միջուարան
Դուրս ունեաք ու խանուն ու ծառաւնուակ և
Ղուրբան օլամ էշիգինըն թաշնա,
Զուլում դըր, շահ բարա, էօլդիւրմա բէնի,
Գէօնդար բէնի վալիդէմին եանընա,
Զուլում դըր, շահ բարա, էօլդիւրմա բէնի:
Ույմա, բարա, ույմա, դիւշման սէօզընա,
Էվադ դա բարանըն սէրֆիրազըդըր,
Իգիդին շօնրէթի իքի գեօզի դըր,
Զուլում դըր, շահ բարա, էօլդիւրմա բէնի:
Իրի բաշտան դիւշըմ ահ ու ֆիղանա,
Հէչ աղամ զրյամի էօզ էվլազընա,
Եազըն դըր, հէյ փէդէր, դիւշմազ շանընա,
Զուլում դըր, շահ բարա, էօլդիւրմա բէնի:
Զալըմ Փէլէք բիւքդի, զրդի տալըմի,
Գուզում բարա, էթմա բանա զուլումի,
Բաղլազըն զոլարըմ, քեասդըն էլիմի,
Զուլում դըր, շահ բարա, էօլդիւրմա բէնի:
Աման բարա, ալմա ահու զարըմի,
Բիթիրմիշըմ նամուսըմի այրըմի.
Էլիմլէ վէյրէյիմ ֆիւզպարմի,
Զուլմ դըր, շահ բարա, էօլդիւրմա բէնի:
Գենա Շահ-Խսմայիլ չեաքեար բիր աջի,

Բարա սէնսըն բէնիմ բաշըմըն թաջի,
Քէսէրլէր մի բաղզա բիթան աղջախ,
Զուլում դըր շահ բարա, էօլդիւրմա բէնի:

Այս խօսքերից յետոյ թագաւորը հրամայեց, — Տղերք,
շուտ արէք, մի ժամ առաջ սրան գլխատեցէք: Երբ թա-
գաւորի ներկայութիւնից դուրս էին հանում Գահժառան-
գին գլխատման մութ զնդանը տանելու և բարձրագոյն
հրամանը գործադրելու, յանկարծ պալատ ներս մտան,
թագաւորին ներկայացան Խոլմանդարի քուրմերը, մոգերը
և վաճառականապետները աղերսելով, որ գահժառանգի
կեանքը ինայէ, իրենց բաշխէ: Երբ ամբողջ քաղաքը ոտ-
քի կանգնած այս աղերսն արաւ, թագաւորն ակամայ,
մեծ տհաճութեամբ նրանց պատասխանեց.

— Շահ-Իսմայլի կեանքը ձեզ բաշխեցի, բայց եր-
կու աչքն էլ պէտք է կարթել տալ:

Այս որ լսեցին, Գահժառանգին նորից յանձնեցին
դահիճներին, որ բարձրագոյն հրամանը գործադրւի: Երբ
դահիճները կարթերով մօտեցան, որ Գահժառանգի եր-
կու աչքերն էլ բնից դուրս քաշեն, թշառ իշխանընրանց
ասաց.

— Զեզնից մի խնդիր ունեմ, դահիճներ, երբ աչքերս
բնից դուրս քաշէք, աջ աչքս ձախ զրպանս և ձախ աչքս
աջ զրպանս դրէք:

Դահիճները խնդիրը խոկութեամբ կատարեցին, ապա
տարին ամայի ձորում բաց թողին: Այս արկածից մի
երկու օր յետոյ, երբ նկատեց Գիւլիզարը, որ ամուսինը
պալատից իր ապարանքը չը վերադարձաւ, Արաբի հան-

գտառութիւնը կարեց, խիստ կասկածանքների մատնւեց
հոգին: Արաբը նորից մի ուամ գցեց և շուրջը արիւն ե-
րևանց: Նորից հարց տւեց Սրաբն իր ուամին, թէ արդեօք
ողջ է իր սրատակիցը, ուամից պատասխան ստացաւ, թէ
կենդանի է: Երրորդ անգամ հարցը էց, թէ որտեղ է,
ուամը ցոյց տւեց, որ Շահ-Իսմայլը մի ընկոյզի ծառի
տակ պառկած է, ագուաւներն էլ աչքերն են կտցահա-
րում: Սրա համեմատ երբ ծրագիր էին պատրաստում
գերահաս օրիորդները, պալատից սպասաւորներ և թիկ-
նապահներ եկան, ասին թէ թագաւորը նրանց իր
պալատն է հրաւիրում: Խսկոյն Արաբն առաջ եկաւ, ա-
սաց.

— Գնացէք, մեզնից ողջոյն և աղերս տարէք թագա-
ւորին, ասացէք, որ մենք պատիւ, պատկառանք ունենք,
այսպէս անշուք սպասաւորների հետ չենք կարող ապա-
րանքից դուրս գալ: Թողի հարիւր նաժիշտ ու աղախին
ուղարկէ, պատկարակներով մեզ տանելու:

Երբ սպասաւորները վերադարձան և Արաբի պատաս-
խանը յայտնեցին թագաւորին, նա հրամայեց պալատա-
կան նաժիշտներին, որ զնան ու առաջնորդեն գեղանի-
ներին իր պալատը: Երբ այս նաժիշտները ներկայացան
Արաբին, առաջարկեցին իրենց հետևել, Արաբը կրկին
նրանց առաջը արգելք դրեց ու ասաց.

— Շատ բարի, բայց մեր բեռները տանելու համար
անհրաժեշտ է հարիւր բեռնակիր բերել, որպէսզի մեր
կապոցները հետներս վերցնեն: Մինչև հարիւր բեռնակիրի
գալը Արաբը իննսունը իննը նաժիշտների և աղախինների
գլուխները կտրտեց, պարկերի մէջ լցրեց, վրաները ծաղ-
կուն ծածկոցներ փոեց և մէկ-մէկ բեռնակիրների շալակը
տալով ասաց.

— Զգուշութեամբ տարէք, պալատ հասցրէք, միջի
զարդերը, գոհարը, յաղջապակն ու բիւրեղը չը փշէք:
Դուք գնացէք, մենք էլ ձեր ետևից կը գանք:

Թագաւորն ու վէզիրը այս որ տեսան անչափ ուրախացան: Իսկոյն բանալ ուին աղքունի դանձարանի դռուները, պալատականներին և մեծամեծներին հրաւիրեցին, որ նստեն ժողովի և քննեն ու գնահատեն Գահժառանգի Մուղանից բերած հարստութիւնը: Բայց երբ պարկերը իրար ետևից բաց արին, տեսան թշւառ նաժիշտների կտրւած գլուխները, արիւնողող մարմինները, թագաւորը բորբոքւած հրամայեց: //

— Գնացէք և սրանց սպաննողներին յօշոտեցէք:

Արաբը նաժիշտների դիակները թագաւորին լնծայ ուղարկելուց յետոյ, ինքը նորից հագաւ Արաբի դիմակը, զրահաւորւեց, զինւեց և պատրաստւեց թագաւորի զօրութեանը դիմադրելու: Թագաւորի հրամանով երբ մի գունդ զօրք տքնում էր մտնել գեղեցկունիների ապարանքը, Արաբը ձիաւորւած սրանց դիմաւորեց, լախտը ճօճեց, թուրը շարժեց և այնպէս հնձեց ու կոտորեց, որ գնդից միայն մի մարդ ազատւեց, փախաւ, գնաց պալատ և տեսածները իսկութեամբ պատմեց թագաւորին: Զայրացած թագաւորը երկու գունդ զօրք նորից ուղարկեց մեր կտրիճի վրայ, բայց Արաբը մտաւ այս գնդի մէջ էլ և հնձեց զօրքի գլուխները, ինչպէս գերանդին կտրտում է հասած արտի բերքը:

Այս որ լսեցին, երկրի ազնւականները, իշխանները, մեծամեծներն ու պալատականները ժողովւեցան խորհրդի թագաւորի նախագահութեամբ: — Արկափայլ, ասաց մի համարձակախօս իշխան, դուք ձեր կրթերին զոհեցիք երեք գունդ զինւոր, հարիւրաւոր նաժիշտ և որ ամենազլսաւորն է, երկիրը մատնեցիք կործանման վիճակի: Միթէ կարելի է ամբողջ երկիրն ու ազգաբնակութիւնը զոհ բերել մի մարդու քըմահաճուքներին, որ իր հարազատ որդու աչքերն է կուրացնում և տքնում է հարսներին իր կանանցը մտցնել:

— Թագաւորի հրամանը երկնային է, ասաց մի ուրիշը, ոչ ոք իրաւունք չունի քննադատելու, Այդ հայի յողի լեզուն պէտք է ծոծրակից դուրս քաշել: — Երեք գունդ զօրք տւէք ինձ, ես նրանց կը սանձահարեմ, ասաց մի զօրական:

Բայց ժողովուրդն ու ժողովականները չը ցանկացան կոիւ մղել թագաւոր այն հարմների դէմ, որոնք իրենց պատիւն էին պաշտպանում: Սակայն թագաւորն ու ազնւականները նորից մի բանակ կազմեցին, որ գնան և նըւածեն այդ անզուսպ հարսներին, որոնց պաշտպանում էր Արաբ-իւզբէզը: Բայց Արաբը գոռաց այդ բանակի դէմ ևս ու ասաց.

— Ես արդար ու անարատ պատիւս եմ պաշտպանում յայտնի բան է ձեզ էլ կոտորելով պէտք է յաղթանակեմ: Ամբողջ բանակը կոիւը մղեց մի Արաբի դէմ, որ համարձակ ասպարէզ էր իջել մաքառելու բունաւորի դէմ:

Մինչ սրանք իրար դէմ կուռւմ էին, Գահժառանզը կատարւած անցքերից անտեղեակ, թափառում էր ձորում խարխափելով և աղեկտուը հառաչանքով նոյնիսկ գազանների գութն էր շարժում: Երբ աչքերի բորբոքը քիչ մեղմացաւ, նովով ներջնչւեցաւ և տաւիդն առնելով այս երգը ասաց:

Եօթը բլրի գլխին բարձրացած խորան, Դու ուղարկիր կոյը աչքերիս գեղ-դարման. Արարածիդ միշտ գթացող Տէր, իշխան, Պաղատում եմ, տուր աչքերիս գեղ-դարման:

Մամիններին բազմած մշտավառ ձրագ, Որ խաշներին անզամ բաշխում ես ճարակ, Միթէ դու էլ անզօր ես ու անճարակ, Որ կուրացած աչքիս զրկես գեղ-դարման:

Հայր Յովնանը ծովն ընկղմեց ժուր եկաւ,
Վիշապ մօրից մեր վէրքերի դեղն առաւ,
Այժմ էլ զրկիր կոյր աչքերիս դեղ ու ճար,
Պաղատում եմ տուր աչքերիս դեղ-դարման:

Աչքերս էլ չեն տեսնում արև, լուսատուն,
Հայրս յափշտակեց շնորհս երկնատուր:
Աղերսում եմ, Տէր, Արարիչ, նորից տուր,
Կուրացած աչքերիս լոյս, դեղ ու դարման:
Շահ-Խսմային կարդում է ողբ աղաղակ, մժառ
Հսկողին ուղում է աղերսն համարձակացն ոչ
Հասիր, օգնիր, խեղճին, ձիաւոր ճերմակ, ներ
Պաղատում եմ, տուր աչքերիս դեղ-դարման

Թուրքերէն

Եղի դադ իւսթիւնէ կուրան մէհրաբի,
Բէնիմ գէօղլարըմա դարման վէրիրսին,
Սրշի բանման ջիւմլէ ալէմ ոահիքի,
Բէնիմ բու գէօղըմա դարման վէրիրսին:
Թուր դադինա ինան հազրէթի Մուսա,
Ելինդա միւջիզաթ գէազդըրըր ասա,
Օդա գէօղլարմա դարման վէրըսա, սասա ոքու
Զարէսրդ գէօղիւմա դարման էյլէսին:

Էմր էյլէզըն եօնուզ դարիայա տալիի,
Պալրկ զուրսաղընդա իբագէթ դըլիի,
Բէնիմ բու գէօղումա չարա դիյայդիւն
Բու դէրդըն վար մի սիզդա դարմանի:

Գէօրմէզ բու գէօղլարըմ ասլա ջիհանի,
Փէդէրըմ ալդի, Արահ էհսանի:
Սանա եալվարըրամ եարաղան զանի,
Բէնիմ գէօղլարմա շէֆա վերասըն:

Շահ-Խսմայիլ չաղըրըր, էրանլար հազըր,
Իւսթիւմիզդէ դադը մէվլագըր նազըր,
Եթիշ իմգագա հազրէթի խըզըր.
Բէնիմ Գէօղլարըմա դարման դիասըն:
Երբ վշտացած Գահժառանգը այս ողըն էր ասում,
Երկնքից երկու աղաւնի թուելով իրար հետ իսուակցում
էին: Նրանից մէկնատումէր բաց դո նև նարատա
Ի իսկապէս թշւառ երկասաարդ, մէզքառ այդոօրը
գցեց քեզ քո հայրը: Եթէ մեր լեզուն հասկանար և իմ
կրծքիցս վար թափած մի զոյգ գետուները վերցնէր,
աչքերին քաէր, գրպանում պահած աչքերը իրենց քաւնը
զետեղէր, իսկոյն պիտի առողջանար, բայց ինչ օգուտ
ինչպէս գտնի վետուրը և ինչպէս մեզ ըմբոնէ:

Այս ինչ սէրը դեռ շատ վագ ստիպէլ էր սիրահա-
րին թոշունների լեզուն անդամ սովորելու: Ուստի երբ լսեց
թոշունների բերած պատգամն, իսկոյն շմելով գտաւտաք իկ-
տուրները, որ նոր թափեցին աղաւնիներն ուղնացին: Աչա-
զուրկը իսկութեամբ կատարեց լսածը, թշւառի աչքերը լուսա-
ւորէցան և նա սկսեց հըմւանքով չորս կողմը զննել մեծ
յափշտակութեամբ: Բայց ճգնաժամին մոռացաւ, աչքերը
բնի մէջ զետեղելիս աջ գրպանի աչքը աջ կողմը և ձախ
գրպանի աչքը ձախ կողմը վոփոխած դնելով շլդիկ դար-
ձաւ, այնպէս որ այլևս Գահժառանգի խոր ծով աչքերի
գեղեցկութիւնը կորչելով մարդ չէր կարող նրան ձա-
նաչել:

Այդ ժամանակ բռնելիք ինթացքի մասին, խորհելով
մօտակայ մի բլրակի վրայ բարձրացաւ, չորս կողմը
զննեց, հեռուն մի ռանչպար տեսաւ, որ երկու զոյգ ե-
զով արտն էր արօրում: Իսկոյն զնաց նրա կողմը, խո-
նարհ մի բարև տւեց և ասաց.

— Հայրիկ, ինձ որդեգրիք, ես քեզ կօգնեմ ամրագ
վարելու, լծկաններդ քշերու:

Զաւակս, ասաց ծերունի ուանչպարը, այժմ հարա-
զատ հայրերը իրենց զաւակների աչքերն են փորում,
տնից վռնդում, ինչպէս ես վստահանում ինձ որդեգուե-
լու, ինչ օգուտ պիտի սանես դու ինձնից առաջ:

— Հայրիկ, ասաց աղերսապին Գահժառանդը, ես հա-
ւատացած եմ, որ քեզ նման աշխատաւոր ծերուկը, որ
վաթսուն տարիքումն էլ արօրի մաճը նձեռքից բաց չի
թողնում, նա բարի սիրու կունենայ և կարող է բնահա-
տել իս աշխատասիրութիւնը և ինձ տանից չարտաքսել:
Ես այնպիսի եռանդով կաշխատեմ, որ դու միշտ ինձից
գոհ էլ մնաս:

Ծերունի ուանչպարը համոզաց, մանաւանդը որ նրա
երեք զաւակներին թագպարը տարել, կուտի գաշտում կո-
տորել էր տեել, ուստի ալեորն ամէլ աշխատաւոր ծեռքի
կարօտ էր մնացել: Այսպէս հայր ու որդեգիր եօթն օր
աշխատեցան դաշտում:

Մի օր իրիկնադէմ, երբ ծերուկն ու որդեգիրը տուն
էին դառնում, մի դոյդ սուրհանդակ սրանց մօտից սրբն-
թաց անցաւ, դնացին գիւղը Սուրհանդակը ուղղակի
գիւղատէրի ապարանքը իջաւ: Դրանք եկել էին զօրք
ժողովելու, թագաւորին տանելու, որը կուտում էր իր հարսի
հետ: Այս օր լոեց, Գահժառանդը թախանձեց հօրից, որ
իրեն զինուր գրել տայէ բան խոյզզոյ պայմանքուրեք

Շահ-իսմայիլը նպատակն հասաւ, սուրհանդակների
հետ գնաց Խոլմանդար և ներկայացաւ սպարապետին:
Ճանապարհին Գահժառանդը աեսել էր իր սիրական Ա-
րաբին կատաղած, փրփրած, որ փոշի էր բարձրացըեւ
գաշտում և նրա աղաղակից ոչ թէ թագաւորի զօրքը,
այլ սարերն էին սասանում: Գահժառանդը ուանչպարի

քառակ և բառ մզայ ին ձաւ:

տարագով, մորթի ծակ գղակով, ըոբիկ ու անդէն մօտե-
ցաւ սպարապետին և ասաց.

— Ծառայիդ արտօնիք, գնամ այդ Արաբի հետ մար-
տընչեմ և նրան տապալեմ:

— Կորիր, գնամ, քոսնտ, շլկիկ, ասաց սպարապետը
զայրացած, այսքան զբահաւորւած քաջեր չը կարողացան
այդ ամենի հրաշին շին ընկճել, դու մնացիր ասպարէդ իջնելու
չեռացիր, յանդուզն լամուկ, թէ չէ լեզուդ կտրել կը տամ:

— Մեծ սպարապետ, ասաց Գահժառանդը երեսը
պնդելով, մեծ գործերը անձնագոհները միայն կարող են
կատարել: Ես վճռել եմ կուել այդ արաբի հետ և նրան
գլորել: Եթէ ինձ թոյլ չը տաք, ես կը ներկայանամ թա-
գաւորին, նրանից իրաւունք կտանամ և նպատակիս կը
հանեմ, ասաց ու խօսքով ընկճեց սպարապետին:

Իսկոյն դէսից դէնից հաւաքած ձի, ուրք, զէնք ու
զրան տւիս կտրիծին, որը հագւելու պէս ձին մղեց Արա-
բի վրանի կողմը և մի այնպիսի որոտալի ձայն գցեց, որ
գորդացըեց ոչ միայն լեռները ու ժայժերը, այլ ցնցեց
նոյնիսկ արաբին:

Արաբը երբ լսեց գահաժառանդի ձայնը, ասաց ինքն իրեն:

— Վախ, ես կեանքումս այս որոտալի ձայնը մի ան-
գամ էլ լսել եմ Շահ-իսմայիլից և ընկճել:

Այդ ասաց ու Արաբը իջաւ հրապարակ և մինչև ե-
րեկոն ընդհարւեցաւ գահժառանդի հետ: Իշխանը գիտեր
որ մարտնչում էր իր սիրելի Արաբի հետ, այս պատճա-
ռով չէր ուզում նրա կեանքին ֆնաս հասցնիլ, այն ինչ
Արաբը բոլորովին չը ճանաչեց գահժառանդին, քանի որ
աչքերը շլկիկացըել էր, ուստի ձգտում էր նրան փշուր,
խշուր անել:

Թագաւորը հեռուից գննում էր այս մենամարտու-
թիւնն ու մաքառումները, ուստի երբ երեկոյի ան դէմ
զինաղաղար եղաւ, հրամայեց իրեն ներկայացնել այդ
անվեհեր գեղջուկին, որ այդքան քաջութեամբ դիմագ-

ըել էր անընկճելի Արաբին; Երբ գահժառանգը ներկայա-
թագաւորին, ասաց.

— Ապրիս, որդիս, այսօր լաւ դիմադրեցիր հրէշ Ա-
րաբին:

Բաւական դիմացայ, տէ՛ր իմ, ասաց գահժառանգը,
որին չըճանաչեցին ոչ իր հայրը, ոչ էլ պալատականնե-
րը: Բայց եթէ ես մի լաւ ձի ու գէնք ունենայի, նրան
վազուց կըբանէի և ձեզ իըներկայացնէի:

Մարիք ախոռը, ջոկիր, հաւանածդ ձին քեզ փէշ-

քէաշ: Ի՞նչ գէնք որ կամենաս, գանձարանի դուռը բացէ

քո առաջ, գնա ու մերցրու:

Գահժառանգը ախոռից իր Գամէր ձին ջոկեց դուռը
քաշեց, գանձարանից էլ ուզած ունքերով գինեցած զըա-
հաւորւեց և գիշերւան մթնումը մենակ գնաց ու Արաբի
ապարանքի առաջը կանգնեցաւ: Արաբը երբ տեսաւ իր
ընակարգանի առաջ կանգնած ձիաւորին, մերցրեց քնարը,

և ասաց այդ անտկնկալ հիւրին հետեւել քառեակը:

Կտրին եթէ գոռող լինի, ի՞նչպար խիշուն
ի՞նչպէս կընկճէ զոռ թշնամին, ո ըստ ողջ զըազմ
ի՞նչի գողտուկ գողի նման զամաք ու ամի:

Սողացել ես խալիս մէյդան:

Ծահ-հսմայիլ ու զատ այս

չաւատացիր ես չեմ հպարտ,

թշնամուս դէմն էլ չունիմ ֆէանդ,

Քէղնից երբէք՝ սրտումս վախ,

Կուզես զուրս եկ, տես իմ մէյդանն...

Ա ը ա բ

Կըանս է ուանգուանգ ներկած, ու զըուայսի

Սարի նման լաշ եմ դիզած,

Կըզլորեմ քեզ ձիուց ցած, ուրդ զարարանը

կայրեմ մոխիր, կանեմ մէյդանն...

80

Ծահ-հսմայիլ

Մի ցած արի, տեսնեմ պատկեր,
Սիրտս բանամ, թափեմ վշտեր,
Գորգուալով երնենք մէյդան,
Որ ինձ տեսնիս դարձած գագան...

Ա ը ա բ

Գնա, կորիր, քաշւիր մի կողմ, կողմ ամայ
Խնայում եմ ես քեզ հոգով.
Բիւր մարդ ընկաւ, տես, լէաշերին,
Նայիր ընկած անմեղներին:

Ծահ-հսմայիլ

Կարօտեցայ, եկայ կողմերդ,
Որ գրաւեմ պարարտ հողերդ,
Կը մեռնեմ էլ ետ չեմ զառնալ,
Կատարել եմ ուխտ ու պայման:

Ա ը ա բ

Երբ լուսանայ դուրս գանք պայքար,
Նրանց տօլ չես, այլ բարեբար,
Չը լսեցիր արաբ անունն,
Որ նւաճեց Սարմատ, Մուղան:

Ծահ-հսմայիլ

Դու ցած իջիր ուրախ-զւարի,
Հազիր կարմիր զիտակցաբար,
Թշւառ հէզիս ափսոս հազար,
Որ ուշ գտայ աչքիս դարման:

Թուրքերէն

իր իգիթ բէնլիյ իդէրաէ,
Նիջէ ալթ էյլար դիւշմանի.
Գիզինջա գեալմիշ զիրմիշ դըր,
Զարթ եթմէք չիւն էր մէյդանի:

81

Վալլահ բէնլրյիմ եօխ դըր,
 Դիւշմանլարա ֆէնդըմ եօխ դըր,
 Բէնիմ սինդան վէրվամ եօխ դըր, ու նոր Ա
 Սէյր էյլա, գեալ մէյդանդա բէնի:
 Զադըրըն ալվան նախաշի, սկսնառ ճնի զի
 Դաղ քիպի երդմըշըմ լաշի,
 Սանա սալարըմ աթաշի, ու աճ առաջոր
 Եանդըրըր քիւլի օրմանի:
 Գեալ աշաղա իւղըն գէօրէմ, ու նախն զիլայ
 Մուհաբէթըմ սանա վէրէմ,
 Գիւրլէյուբ մէյդանա գիղէմ,
 Գէօրասըն բէնի արսանի:
 Վար իգիղըմ սէն բիր եանա,
 Եազըխսըն, զըմամ բէն սանա,
 Նըյմըշըմ նիչէ բին ջանա,
 Բախսանա գիւշան ինսանա:
 Աբզուլայդըմ գեալդըմ բէրի,
 Չաբթ էթմա չուն բու եէրի,
 Էօլիւրիմ, կիթմազըմ գէրի,
 Էթմիշըմ ահտու ամանի:
 Սաբահ օլսուն դուրամ ջէնդի, ինչամ զիքան
 Դէյիլարն օնլարըն դէնդի, ու սիրն ուուն
 Տնւյմադըն Արաբ իւգբէգի:
 Ֆաթհ էթտի Սարմատ-Մուղանի:
 Էն աշաղը գիւլա-գիւլա, ու սիրն նիքի զի
 Ալի գէյգի բիլա-բիլա, ու զայն զի Անձ
 Եազըխ բու Շահ-Խսմայիլա, ինչամ ախմայի
 Բի գէջ բուլդի գեօդա դարման:

Այսուր լսեց Արաբը, իսկոյն ձայն տւեցլու —
 — Աղջիկներ, ինչ էք սոսկացել ու մնացել վարժի-
 ջէք մեր իշխաննեկաւ: Խող ուղարակ զի
 Երեքը միասին վար իջան, Գահճառանգին գրկեցին
 համբուրւեցան, սկսան լալ: Երկար թէ կարձ մնացին այս
 վիճակում, պարզ չէ, միայն Արաբը շուտով զգաստանա-
 լով ասաց.
 — Իշխան, դուք այստեղ երկար մի մնաք: Ձնացէք
 ձեր վրանը: Առաւօտ թագաւորն անշուշտ նորից բըրգայ
 մեր լախտի ու սրի շարժումները զններու: Այդ ժամա-
 նակ դու իմ լախտիս մի հարւտծ տուր, ինձ գլուխիր, չոքիր
 կրծքիս և ձայն տուր թագաւորին, որ գայ և վրէժը շու-
 ծելու համար իր ձեռքով սուրլ միէ կուրծքու: Երբ թա-
 գաւորը կը մօտենայ, դու մի կողմը քաշւելուդ պէս, ևս
 նրան այնպիսի սրի մի հարւած հասցնեմ, որ միջից կիս-
 ւի: Այսպէս պայմանաւորելուց յետոյ թագաւորը գնաց:
 Ինչպէս պայմանաւորել էին այնպէս էլ կատարեց:
 Արաբին սպանելու և վրէժ լուծելու տենչը այնպէս էր
 բորբոքել թագաւորի սիրտը, որ նա խիստ մօտեցած մե-
 նամարտի տեղին, սպասում էր լսոստացւած յաղթանա-
 կին: Բաւական ժամանակ Գահճառանգը աջ ու ձախ
 ընդհարւելուց յետոյ, եկաւ իր գամէր ձիով կանգնեց Ա-
 րաբի դիմաց: Զարգին, զարկւան, Արաբի գիւրզին մի այն-
 պիսի հարւած իջեցրեց իր լախտովը, որ նստած ձիով
 գունդ ու գլոր գլորւեցաւ մի խրամատ: Իսկոյն ձիուց
 վար իջաւ գահճառանգը, գնաց նստեց Արաբի կրծքին:
 Ապա ետ դառնալով բարձր ձայնով կանչելով ասաց թա-
 գաւորին:

— Տէր արքայ, եթէ փոքրաւորը մի հսկայի գլորէ,
 ինչ պէտք է անել:

— Պէտքէ այդ հսկային խոխողել, ասաց թագաւորն
 ու աւելացրեց, բոլոր թշնամիներիդ այդ օրը գլորեա, որդի:

— Ուրեմն արքայ, ասաց գահի առանդը, մօտեցիր և
թշնամուղ քո ձեռքով պրախողող արա:

Երբ թագաւորը մերկ որով վրայ վազեց, որ սպանէ
Արաքին, Գահաժառանդը իսկոյն մէկ կողմը քաջւեց, որ
իբր ճանապարհ բանայ նրան: Արաքն անմիջապէս ցատ-
կեց, խլեց թագաւորի ձեւքից մերկ սուրընկ այդ խորով
բռնաւորին միջից կիսեց:

Իսկոյն մունետիկով լուր տիմ բանակին, մէ աս-
պաքէզ ելնող քաջը ինքը Շահ-Խմբային էր: Պալատա-
կանները, իշխաններն ու մեծամեծները սեկոնդակալող
թագաւորի ձեռքը համբուրելու: Բոնտոր հօր առաջինը
վերցրին տարան, պապերի դամբարանում ամփոփեցին:
Քառասուն օր յետոյ Շահ-Խմբայիլը հարսանիքն ըն-
կսեց, Գիւլիգարի հետ ամուսնացաւ, Երբ հարսանիքը լը-
րացաւ և սիրահարները իրենց մուրազին հասան, այդ ի՞-
րեկոյ Շահ-Խմբայիլը ոգեսրւելով իր սրբելանի հետ սոնն
քառետակները փոխանտկեցին: Այսամանիայ սչիչով
ոչ սահման ունենալու այս այս այս այս այս այս այս
Շահ-Խմբայիլ վյուրաբան լծոցոց

Սիրուհիս ալ շոր է հազել, այս սիրեմ դաշտամ
սյան Զարդարւելու ժամն է հասել, մայստան այլի
մ բեկարից մուշկի ջուր է հստել, ուստի ըսոյմազարդոց
մայս Բոյը շնչելու ժամն է հասել: Արդաք պահոյ զադ
խայ ծանակ ու այս այս այս այս այս այս այս այս
Գիւլիգար ընդունել ճարպան վայս

Գուրս արի, հոգւոյս սիրեկան, այս այս այս
Քէլած ճամբիդ ես զուրբան, իրանուր ու արմ
ծլւում ես ինչպէս սոխակ,
Լեզւիդ, բոյրիդ հոգիս զուրբան:

Շահ-Խմբայիլ յան չ զամբ չալ
Յրւած մազերդ փնջիկ մնջիկ, իւս չգուշ՝
Բոյը երկար բարակ մէջիկ,

Կուրծքդ նման կաքւի լանջի, զոյլ վհօչի
Սիրոյ օրն ու ժամն է հասել: Այս արմայիչ
Գիւլիգար

Կրծկալիդ ցնցող շրջանակ, ապա ամպութի
Դօտուղ գոհար կաթով դանակ,
Քեզ համար գուզեցի այս բաղն,
Վայրիդ բոյրին լինեմ մատաղ:

Շահ-Խմբայիլ մզմանցալցի զնոցը

Ես երգեցի միշտ ճշմարտին, ապա արտին,
Ես կանչեցի զուտ ճշմարտին, ապա արտին
Գոհ եմ հասանք մեր բաղմանքին, ապա միմ
Հասանք քաղցր մեր մուրազին:

Գիւլիգար ամուր ամուր

Վարդիթերը, շահ, քեզ մատաղ,
Քեզ պէս կտրիծ քաջին մատաղ,
Սպիտակ թերիդ ես մատաղ,,
Փաթաթւիր պինդ վզիս ճերմակ:

Թուրքերէն

Սէփիգըմ գէյմիշ լիբասը, իւց ինաւցի ալ Ա
Սալըլմանան վախթի գեարդի, անձամ և ապաս
Գօյնուն միսկի ամբէր զոխար, զարդ զրյուիր
Էօփիւշմանըն վախթի գեարդի:

Գեալ բէնիմ ջանդան սավոիյիմ,
Եօլունա զուրբան օլայըմ,
Էօթէրսէ բէլլիրիւլ միսալի,
Դիլինա, զուրբան օլայըմ:

Զիլիֆլարն փունջրա, փունջէա,
Բօյի ուզուն, բէլլի ինջա,
Մէմէլար բնզզար թուրունջա,
Մէփիլմանըն վախթի գեարդի:

Դէօշիւրուր մէնդիլըն սաշաղին քցնկոր
Բէլինդա ալմաս բուշաղին և միջ լոյն
Սէնին իչուն բէլագըմ բաղի,
Գիւլընա զուրբան օլայըմ,

Շահ-իսմայիլ չաղլպըմ չազզա,
Չօխ շիւքիւր, երդըր մուրաղա,
Իւքսէր այվան, շիրին օլա,
Բիրլաշմանըն վախթի գեալդի:

Միւս լուսնին սկսեցին Գիւլ-Փէրիի հարսանիքը,
Եին տւեց Շահ-իսմայիլը իր սրտակից և հոգեկից քաջ
Եշխանին—Սրաբ-իւզբէգին, նրանց էլ հասցրեց իրենց
մուրագին: Բոլորն էլ մինչև իրենց կեանքի վերջը իրար
հեա սիրով և համերաշխութեամա ապրեցին:

Այս իշխանի օրով Խոլմանդարն այնքան մեծ հոչակ
ստացաւ և Գահժառանգը այնքան սիրելի դարձաւ, որ ժո-
ղովուրդը նրանց պատմութիւնը բերան սովորելով որ-
դոց որդի աւանդեց և մեզի հասցրեց նրանց արկածները:

Նիւֆրիաս մարմա՞ նիշե՞ լոմք
Նիլայո մազդայո ամայո՞
Հայո՞ բայց մազդայո նազդի՞օ՞
Նիլայո մազդայո ամայո՞
Ամայո՞ ամայո՞ մազդայո՞ իլի՞ջ
Ամայո՞ ամայո՞ մազդայո՞ իլօ՞
Ամայո՞ ամայո՞ մազդայո՞ նայշնչ Ա
Ամայո՞ ամայո՞ մազդայո՞ իլի՞ջ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԾԱԽ-
ԻՈՒՄ ԵՆ ՀԵՏԵԻԵԱԼ ՀՔՔԵԱԹՆԵՐԸ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ-
ԹԻՒՆՆԵՐԸ

- ԹԱՀԻՐ ՄԻՐԶԱ ԵՒ ԶԷՕՀՐԱ ԽԱՆՈՒՄ. Պարսկերէն բնա-
գրից հայերէնի փոխադրւած երգերով, պատկերազարդ,
Գինն է — 30 կ.
- ՖԱՀՐԱԴ ՈՒ ՇԻՐԻՆ. Պարսկերէնի և թուրքերէնի համեմա-
տութեամբ հայերէնի փոխադրւած. Ոտանաւորներն ազատ
են թագմանւած: Ոտանաւորների հետ զուգընթած թուր-
քերէն բնագրի երգերն է դրւած հայերէն տառերով: Պատ-
կերազարդ: Գինն է — 30 կ.
- ՇԱՀ-ԻՍՄԱՅԻԼ ԵՒ ԳԻՒԼԻԶԱՐ. Պարսկերէնի և թուրքերի
համեմատութեամբ հայերէն փոխադրւած, Ոտանաւորներն
ազատ են թարգմանւած: Ոտանաւորների հետ զուգըրթաց
թուրքերէն բնագրի երգերն է դրած, հայերէն տառերով
պատկերազարդ: Գինն է — 30 կ.

ԶՈՒԱՐՃԱԼԻ ԶԲՈՍԱՐԱՆ և ԷՖԷՄԵՐԴԻ. Եօթն առանձին մասերի
բաժանւած, Հանելուկներ, Երազանան, Էֆէմէրդէ, Բնազն-
նութիւն, Մարմահաղաց, տաղ Յովասափու թագաւորին
և ուրիշ անմեղ զբոսանքներ: Գինն է 1 ր. 30 կ.

ՆԱՐԵԿ. Ընտիր թղթի վրայ, մեծ տառերով, կիսակաշի կազմով:
Գինն է — 2 ր. — *

ՓՆՁԻԿ ԵՐԳԱՐԱՆ. Ընտրի երգերի հաւաքածոյ . . . — 40 կ.



ԱՐԵՎԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԻ ՀՅԱԿԱՆ ԳՈՅՔՆԻ
ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՅ ՀԱՅԱԳՈՅՆԻ ԱՅԵԼՑՅՈՅ ՅՈ ՍԱՐԱ
ՀԱՅԱԳՈՅՆ

ամպ սշտիւլս ԱՎԱԾԱ ԱՎԱԾԱ Ա
ըրյարադիւնոյ խցիրոյ եռոյրական հմեղան ընդ
վ 08 չ մօդի

Բրյուգանան մասի պատճեն
անձեռած հմեղայուն և գմբեթազոր ԱՎԱԾԱ ԱՎԱԾԱ Հ
ուսրա մշտելու անձեռած նաև արական հմեղան վետակու
զուն ծանմաքար ուն իշմականան հաւաներան և
ուսրա հայդանան մշտելու նազր և մասայ պարան մշտել
վ 08 չ մօդի ըրյարադի

Այդացան և գմբեթազոր ԱՎԱԾԱ ԱՎԱԾԱ ԱՎԱԾԱ Հ
մասայ անձեռած նաև արական հմեղան անձեռած
անձեռած ուն գմբեթազոր հաւաներան և ուսրա իշմ
հայդանան մշտելու նազր և մասայ գմբեթան մշտելուն
վ 08 չ մօդի ըրյարադիսար ուսրա
անձեռած և անձեռած անձեռած անձեռած

հայդանան մշտելուն միուն ԱՎԱԾԱ ԱՎԱԾԱ հմեղան
մասայ անձեռած նաև արական հմեղան անձեռած
անձեռած ուն գմբեթազոր հաւաներան և մասայ իշմ
վ 08 չ մօդի ուն գմբեթազոր իշմական մասայ մաս

իշմակ հայդանան հայդանան ուն գմբեթազոր ԱՎԱԾԱ
վ 08 չ մօդի

վ 08 իշմական հայդանան հայդանան ԱՎԱԾԱ ԱՎԱԾԱ



ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԾԱԽ-
ԻՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԱԼ ՀԵՔԵԱԹՆԵՐԸ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ-
ԹԻՒՆՆԵՐԸ

1. ԹԱՀԻՐ ՄԻՐԶԱ ԵՒ ԶԵՕՀՐԱ ԽԱՆՈՒՄ. Պարսկերէն բնա-
գրից հայերէնի փոխադրւած երգերով, պատկերադարդ,
Գինն է — 30 կ.
2. ՅԱՀՐԱԴ ՈՒ ՇԻՐԻՆ. Պարսկերէնի և թուրքերէնի համեմա-
տութեամբ հայերէնի փոխադրւած, Ոտանաւորներն ազատ
են թագմանւած։ Ոտանաւորների հետ զուգընթած թուր-
քերէն բնագրի երգերն է զրւած հայերէն տառերով։ Պատ-
կերազարդ, Գինն է — 30 կ.
3. ՇԱՀ-ԻՍՄԱՅԻԼ ԵՒ ԳԻՒԼԻԶԱՐ. Պարսկերէնի և թուրքերի
համեմատութեամբ հայերէն փոխադրւած։ Ոտանաւորներն
ազատ են թարգմանւած։ Ոտանաւորների հետ զուգըրթաց
թուրքերէն բնագրի երգերն է զրած, հայերէն տառերով
պատկերազարդ, Գինն է — 30 կ.

Զուարճալի ԶԲՈՍԱՐԱՆ և ԷՖԷՄԵՐԴԻԿ. Եօթն առանձին մասերի
բաժանւած, Հանելուկներ, Երազահան, Էֆէմէրդէ, Բնազն-
նութիւն, Մարմնախաղաց, տաղ Յովասափու թագաւորին
և ուրիշ անմեղ զրօսանքներ, Գինն է 1 լ. 30 կ.

ՆԱՐԵԿ. Ընտիր թղթի վրայ, մեծ տառերով, կիսակաշի կազմով,
Գինն է — 2 լ. — *

ՓՆՉԻԿ ԵՐԳԱՐԱՆ. Ընտրի երգերի հաւաքածոյ . . — 40 կ.



2013

23330

